

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ազգային, Գրական, Քաղաքական, Գիտական,

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇԲԱԹ

թի 30

I ՀԱՅԵՄԲԵՐ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՏԱՐԵԴԱՐՁ ԾՆՆԴԵԱՆ ՎԵՂ. ՍՈՒԼԹԱՆԻՆ

(Խմբագրական)

Պատրիարքական Կոնդակ:—Մասենախօսական:—Մալր Վարժարանի վերաօրնութիւնը:—

Մեր կին գրողները:—Միջազգային արհեստագ:—Օրուան Նօքեր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՍԻՍ Շաբաթների արեկան բաժանորդագիւնն է Կ. Պոլսոյ համար Բաւսուն դր. եւ գաւառներուն համար յիսուն դր., կանխիկ վճարելի: Արտասահման՝ 12 Ֆրանկ կամ 5 բուլլի: Թղթատարական ծախքը Խմբագրութեան վրայ է: Վեցամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր: Բաժանորդագրութիւնները կը սկսին ամէն ամսոյ մէկին: ՄԱՍԻՍ հրատարակ կ'ելի ամէն շաբաթ առտու:

Զի հրատարակուած ձեռագիրները ետ չեն դարձուիր:

ՄԱՍԻՍԻ մէջ կ'ընդունուին նաեւ ծանուցումներ, դիւրամասշէլի պայմաններով:

Զեմ-Բէ Կը ԾԱԽՈՒԻ ՀԱՏԸ ԲԱՌՍՈՒՆ ՓԱՐԱՅԻ
Հասցէ

درعليه ده غلطه ده (ماتيس) غنیه سی اداره سی

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՍԻ

Կ. Պոլիս, Ղալաթիա

Rédaction de la Revue MASSIS

Galata, Constantinople

UNIVERSITY

OF THE STATE

OF NEW YORK

THE STATE OF NEW YORK

IN SENATE

JANUARY 1880

(SUN)

REPORT OF THE COMMISSIONER OF THE LAND OFFICE

ALBANY

1880

PRINTED BY THE STATE PRINTING OFFICE

ALBANY

1880

ALBANY

ALBANY

ALBANY

ALBANY

ALBANY

Ծաղկաւոր

Թէլը, որ այսօր գրեթէ բոլոր ժողովրդաց գլխաւոր ըմպելին դարձած է, ա՛յնքան բաղձաթիւ տեսակներ ունի որ, արդարեւ գործածողներուն համար բուսական դժուար է լու ընթարթիւն մը ընել: Այդ տեսակներէն մասնք նշանաւոր են իբր տխրածահամ եւ քաղցրաբոյր, մասնք ալ թէեւ նայնքան տխրածելի համ ու հոտ չունին, գերազանց են սակայն իբր կողդուրիչ եւ զօրացուցիչ: Վերջապէս իւրաքանչիւր թէյ իր սւրբայն յաղկութիւններն ունին որոնք զինքը կը զանազանեն ուրիշ, տեսակներէ:



Սակայն կայ թէյ մը, որ այդ յաղկութեանց մէկէն կարեւորները կը միացնէ իր վրայ, այսինքն՝ գոյն, համահոտ եւ մանուշահոտ կաղ, դուրիչ եւ զօրացուցիչ անզուգական ազդեցութիւն մը, եւ այդ թէյն է ճաքոնի քիյը, որ այդ յաղկութեանց շնորհիւ կը յարմարի մէկն ամբողջի ու կազմութեան: ամէն կլիմայի եւ եղանակի եւ ամէն հաշակի:

Յալբուսեան եւ Իսաղուլեան քիյի մեծ վաճառատուներ, իր բաղձաթիւ յաճախորդաց ծառայութիւն մը մատուցանելու համար, այս անգամ մեծաքանակ ներածած է հարեւական զուտ թէյ մասնաւոր եւ դակտան առփերով ու կը հրաւիրէ օգտուել այս առիթէն բոլոր անոնք, որ կը փոփաքին ունենալ թէյ մը:

Համով, հոտով, առողջապահիկ եւ կազդուրիչ:

Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկական, չինական, Սէլլան եւ Ճավայի մեծաւառ տեսակ թէյեր:

7—10

Ուսադուրիւն մարգայի

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբու եւ կնիւտաբան(gynécologue). Տօքթօր Էմիրզէ որ 15 տարւան գործունէութեամբը մեծ հաճախ ստացած է, կը ծանուցանէ յարգայ յաճախողներուն թէ բնականը փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18, Բաց ի վերայիշեալ իւր մասնագիտութենէ կը բուժէ նաեւ նորագոյն մէթոսներով ջղային եւ հոգեկան ու երեւակայական մէկն տեսակ հիւանդութիւնները, ինչպէս նէվրոսթէնի եւ tic անուանուած աչքի երեօի եւ ուսերու ագիչ եւ ալիւմայ շարժամները եւ դաշտանի դադարումէ յառաջ եկած ջղային խռովումները եւ երիտասարդական մօլիքները, ինչպէս նաեւ գինեմօլիքը, մօրիֆնմօլիքը եւալլին: Կիրակիներէն զուտ ամէն օր, կէսօրէն սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կընդունի, եւ ուրբաթ օրերը ձրիաբար կը դարմանէ վկայեալ աղքատները: 7—10

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Գաղսնիք գեղեցկութեան, Առողջութեան եւ Երկայնակեցութեան: ԲթօՖ. Պոյմ Լէյնըրտէ: Թարգմանեց Անգլիկէրէնէ, Սոմաւել Գ. Վարժապետեան: Կ. Պոյիս. Տպագրութիւն, Յ. Մաթէսեան, 1905:

Հեռաքրքրաշարժ, հրապուրիչ, զբոսալի եւ ամէն տեսի ու հաճախ յօժ պիտանի գրքայի մը 248 երեսներէ առկա առաջ: Թղթակազմին գինն է 8 դր., Լաթակազմին՝ 10 դր.: 10է աւելի գնողներու 15 առ հարիւր եւ 50է աւելի գնողներու 20 առ հարիւր զեղչ: Վաճառման կեդրոնաւորներն են Յ. Մաթէսեան թղթավաճառանոցը եւ Պալեն, գրատունը:

7--10

Ա Յ Ր, Կ Ի Ն, Տ Ղ Ա Յ

Մարդա տենդի հիւանդութենէ վերջը տկար կը մնայ, մանաւանդ տղայ մը: Խէպէտեւ հարկ չիտեսնուի, հիւանդին պէտք է տալ



SCOTT'S EMULSION

և տկարութիւնը անմիջապէս և վստահափար կը փարատէ և կը տեսնուի որ

Ը Ս Գ Օ Թ Ի Բ Ե Ղ Ը Դ Ր Ո Ւ Թ Ի Ո Ւ Ն

մարմինը պատող բոլոր տկարութիւններու դեմ ամենամեծ դեղ է: Ըրեգական տակ ասոր հաւասար բան մը չիկայ. այնպէս կատարեալ կը բժշկէ՝ որ կը կարծուի թէ հիւանդութիւնը կուտէ ու կը կլլէ:

Շեշերու վրայ տար ուշա-
դրութիւն ընել պէտք է:

Բոլոր բեղաճեցման եւ բեղաճեցման եւ ծախս:

18

ՅԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՅ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴԻԷ

Ունի կեանքի, օժիտի, արկածի, ցման թուականի հիւղեր
VICTORIA ՎԻԲԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛
DE բժշկական քննութեամբ եւ թէ՛ առանց բժշկական քննութեան
BERLIN Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ
բուն վճարումները շարաքական մասնավճարներով տեղի կունենան,
սկսեալ 5 դրուէն

Ապահովագրեալ գումար 1904ին ծր. 1,491,279

Պահեստի դրամ 1904ին » 605,718,000

Հաստատուած 1853 սեպտ. 20ին ար-
այակացման արտադրութիւն եւ ուղղակի
կառավարութեան հսկողութեան ներ-
քիւ:

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայս. Պանքա
եւ Քրէտի Լիոնէ

Լիպգոր Ընդհ. Ներկայացուցիչ
Ա. Կ. ԼԻԻՉԷՆԱ

Կալարա, Պերեքի խան
Օրթանդ-Պանքի դեմ

ՄԱՍԻՈՆ

54^{րդ} ՏԱՐԻ, 2. ՇՐՋԱՆ

ԹԻՒ 30

1 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1905



ՏԱՐԵԴԱՐՁ

ԲԱՐԵԲԱՍՏԻԿ ԾՆՆԴԵԱՆ

ՕԳՈՍՏԱՓԱՌ

ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԽԱՆԻ

ՎԵՀԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ

ՄԵԾԱՆՈՒՆ ԻՆՔՆԱԿԱԼԻՆ ԹՈՒՐԿԻՈՅ

Յնծութեան և բերկրութեան սրտաղեղ արտայայտութիւններով ու ամենաշքեղ հանդիսաւորութեամբ կը տօնուի վաղը, ՕԳՈՍՏԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ ծննդեան բարեբաստիկ տարեդարձը, որ երջանկութեան դարագլուխ մը եղած է Օսմանեան ընդարձակածաւալ Կայսրութեան միլիոնաւոր բնակչութեան համար, հաւատարիմ ու երախտադէտ հպատակք Ն. Կ. ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ: Ամէն դէմքերու վրայ ուրախութիւն կը ճառագայթէ և ամենուրեք բարեմաղթական օրհներգութիւններ կը բարձրանան դէպի երկինք: Ինչպէս Օսմ. փառապանծ մայրաքաղաքին՝ նոյնպէս և նահանգներու, գաւառային քաղաքներու, մինչև հեռաւոր գիւղական անկիւններու մէջ, ամէն ազգի և ամէն դասակարգի ժողովուրդ նոյն ոգեւորութեամբ եւ շնորհապարտութեան ինքնաբոլիս զգացումներով կը մասնակցի օրուան բերկրառիթ տօնին եւ ջերմագին բարեմաղթութեանց միահամուռ մրմունջներ կը բարձրացնէ: Այս ցնծագին ու խնդագին արտայայտութեանց կը փութան մասնակցիլ նաև Թուրքիոյ մէջ հաստատուած բոլոր օտարազգիները, որոնք՝ ՎԵՀ. ԿԱՅՍԵՐ բարձր հովա-

ներին շնորհիւ՝ կը վայելեն ազնիւ ասպնջականութիւն մը, վարելով իրենց առեւտրական, սեղանաւորական ու ճարտարարուեստական գործերը, բարգաւաճ վիճակի մը մէջ :

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ Ծննդեան բարեբաստիկ տարեդարձը փառաւոր առիթ մըն է Թուրքիոյ համայն բնակչութեան համար, միշտ եւ հանապազ աղօթող իր սիրեցեալ ՎԵՀԱՊԵՏԻՆ կենաց, հանդիսաւորապէս արտայայտելու այն երախտագէտ զգացումը զոր կը տածէ Ն. Կ. ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ նկատմամբ, Որոյ հայրական հովանիին ներքեւ կը վայելէ ամէն բարիք եւ շնորհներ :

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ Ծննդեան, ինչպէս նաեւ Գահակալութեան տարեդարձները բարեբաստիկ առիթներ են հանրագումար ձեռնարկութիւններու եւ հաստատութեանց սկզբնաւորութեան ու հիմնարկութեան համար, որոնք կը բաղմապատկուին տարուէ տարի, Ն. Կ. ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ բարձր նախաձեռնութեամբ, եւ վաղը եւս՝ նոյն բերկրալի առիթի՝ սկզբնաւորութիւնը կըլլայ զանազան հանրագումար շինութեանց եւ բարեգործական հաստատութեանց, նոր ու չքեղ փայլ մը աւելցնելով ընդհանուր ցնծութեանց :

ՕԳՈՍՏԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆԸ, բարենպաստակ հաստատութեանց ու հանրագումար ձեռնարկութեանց յարաճուն զարկ մը շնորհելով, միեւնոյն ժամանակ անդուլ անդադար կը հսկէ երկրին ընդհանուր բարգաւաճման ու զօրութեան, որուն նաւային եւ զինուորական ոյժերը աւելցած են անհունապէս, ելմտական ու տնտեսական վարկը բարձրացած է, կրթական, երկրագործական, ճարտարարուեստական հիմնարկութիւնք բաղմապատկուած են եւ երկաթուղիները բազմաճիւղ կերպով ծաւալած՝ իբրեւ բարօրութեան ու հարստութեան աղբիւրներ :

Գթութիւնը եւ բարեգործութիւնը ամենալայն սահմանի մը մէջ կ'իրագործուին ընդ հովանեաւ Ն. Կ. ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ Որուն շնորհիւ հիւանդանոցներ, անկեղանոցներ, պատասպարաններ կը բաղմապատկուին ու կ'ընդարձակուին, դիտական ու մարդասիրական ամէն առաւելութիւններով օժտուած : ՕԳՈՍՏԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆԸ, իբրեւ հայր հասարակաց, կը հսկէ նաեւ այս ամէնուն վրայ, իր նպաստներն ու բարձր հոգածութիւնը շնորհելով :

Գնծութիւնը եւ ուրախութիւնը ընդհանուր է, եւ Օսմանեան չքեղ ոստանը օրերէ ի վեր տեսնուած մեծամեծ պատրաստութիւններով՝ վաղը եւ վաղը զիչեր տօնական հոյակապ երեւոյթ մը կ'առնէ, թէ՛ ծովու եւ թէ՛ ցամաքի վրայ, հանրային խրախճանքներով, լուսավառութիւններով, զարդարանքներով ու երախտագիտական արտայայտութիւններով :

Ու այս բոլորին արձագանքը կուտայ Մամուլը՝ նկարագրականներով, բարեմաղթական յօդուածներով ու քերթուածներով եւ ցնծալից տողերով՝ ի նշան երախտագիտութեան եւ հաւատարմութեան առ Ն. Կ. ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆՆ Որուն բարձր հովանիին ներքեւ, ինչպէս կրթական գործը, ուսմունք եւ գիտութիւնք, նոյնպէս եւ լրագրութիւնը կը յառաջդիմէ ու կը բարգաւաճի հետզհետէ :

ԿԱՅՍԵՐԱԿԱՆ Ծննդեան բարեբաստիկ տարեդարձին առիթիւ ամէն կողմէ բարձրացող երախտագիտական ու բարեմաղթական օրհներգութեանց ձայնակցելով եւ մենք խոնարհաբար, կը մաղթենք արեւչատութիւն ու յարատեւ բարեբաստութիւն Օսմանեան մեծագոր եւ լուսամիտ ԿԱՅՍԵՐ եւ կը մաղթենք սրտեռանդն՝

ՅԱՐԵՏ ԿՅՅՅԵ

ՎԵՀԱՅ ԴԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏԻԻԼ-ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՍՐ
ՄԵԾԱՆՈՒՆ ՎԵՀԱՊԵՏՆ ԹՈՒՐԲԻՈՅ



ՄԱՅԵՆԱԲՈՍԱԿԱՆ



ԳԱՂՏՆԻՔ գեղեցկութեան, առողջութեան եւ երկայնակեցութեան. — Հեղինակ Քրոմ. Պոյս Լէյքմս. — Թարգմ. անգլիերէնէ՝ Սամուէլ Գ. Վարժապետեան. — Տպագր. Յ. Մասթոսեան, Կ. Պոլիս:

Ամէն անգամ որ հրատարակուած տեսնեմ որ և է գիրք, ինքնուրոյն հեղինակութիւն կամ թարգմանութիւն, մեծ հաճոյք կը զգամ, վասն զի ընդհանրապէս մեր գրողները օրը օրին սպառուելու համար միայն բան մը կ'արտադրեն, և գրական երկարաշունչ աշխատութիւնը հազուադէպ երեւոյթ դարձած է: Այս պատճառով, որքան շատցած են գրողները՝ այնքան նուազած են գրքերը, որքան առատ են առօրին յօդուածները՝ այնքան սակաւ են երկարողութիւնները: Ամէն գրող կ'ուզէ անմիջական արտադրութիւն, կարճ և թեթեւ յօդուածիւն և ներկային գնահատութիւնը միայն, և զանոնք կը սպառէ առօրին հրատարակութիւններէ, այն է հրապարակագրութիւնէ կամ լրագրական յօդուածագրութիւնէ. իսկ ինչ որ կ'ընծայէ գրքի հրատարակութիւնը, թէ և աւելի տեսական ու շահաւէտ, կարեւորութիւն չունենալ կը թուի մեր հեղինակներու աչքին:

Ահա թէ ինչո՞ւ մեծ հաճոյք կը զգամ երբ գրքի մը հրատարակութիւնը տեսնեմ, ըլլայ ինքնուրոյն հեղինակութիւն կամ թարգմանածոյ երկասիրութիւն:

Իսկ երբ մէկը կը ձեռնարկէ թարգմանելու և հրատարակելու երկ մը՝ որ դասագիրք չէ, երկ մը՝ որուն սպառումը դպրոցական գրքի մը չափ չահաբեր ըլլալու սահմանուած չէ, ա'լ աւելի մեծ գոհունակութիւն կը պատճառէ, ըստ որում մեր գրչի աշխատաւորներուն մտաւորական յօգնութիւնը մեծագոյն մասամբ դասագիրք պատրաստելու կը նուիրուի: Հետեւաբար, գրական նոյնքան գեղեցիկ անակնկալ մըն է Սամուէլ Գ. Վարժապետեանի այս օրերս ի լոյս ընծայած սիրուն հատորը՝ որքան նուիրուած է այն գե-

ղեցկութեան գաղտնիքը պարզելու կարեւոր հարցին, ինչպէս և առողջութեան ու երկայնակեցութեան միջոցները սորվեցնելու թանկագին խնդրին:

Ի՞նչ գիրք կայ որ իր պարունակութիւնը այնչափ ճշգրիտ կերպով ցոլացնէ իր անունովը, ինչպէս Սամուէլ Գ. Վարժապետեանի հրատարակութիւնը, որ կը կրէ սա հետաքրքրաշարժ և պայծառիմաստ անունը. «Գաղտնիք գեղեցկութեան, առողջութեան և երկայնակեցութեան»: Կա՞յ արդեօք մէկը որ չուզէ գիտնալ այդ գաղտնիքը, չփափագի սորվիլ՝ գեղեցիկ, առողջ ու երկայնակեաց ըլլալու միջոցները: Կամ ուրիշ հարցում, կա՞յ արդեօք մարդու համար աւելի կարեւոր հարց քան գեղեցիկ, առողջ ու երկայնակեաց ըլլալու հարցը. — անշուշտ ո'չ, պիտի պատասխանուի ամենուստ: Սակայն ես կ'ըսեմ թէ արդի նիւթապաշտ դարուս մէջ, երբ մարդկային ըմբռնումները այլափոխած են նոյն իսկ ընտելութեան պահանջները, կայ չորրորդ հարց մը որ շատերու քով կը գերադանցէ մինչև անգամ գեղեցկութեան, առողջութեան, և երկայնակեցութեան գաղտնիքը բացատրող խնդիրները, այն է հարստութեան խնդիրը. այնպէս որ եթէ բրօֆէսօր Պոյտ Լէյքմս Անգլիացին որ հեղինակն է Սամուէլ Գ. Վարժապետեանի թարգմանած ու հրատարակած հատորին, աւելցնէր իր երկասիրութեան ճակատը նաև «Գաղտնիք հարստութեան» անունը, հաւանական է թէ շատ աւելի հետաքրքրութիւն և ուշադրութիւն գրաւէր, զի դժբաղդաբար շատեր են որ հարստութիւնը աւելի գերադաս կը համարին քան գեղեցկութիւն, առողջութիւն ու երկայնակեցութիւն, որովհետեւ չեն ըմբռնած թէ ատենք են որ կը կազմեն ու առաջ կը բերեն բուն ու ճշմարիտ հարստութիւնը:

Սակայն այս ճշմարտութեանը կը համոզուին իսկոյն անոնք որ ներկայ հրատարակութեան անունը լսելով չեն բաւականանար, այլ կը կարդան զայն ամբողջապէս. զի չուտով պիտի համոզուին թէ աշխարհի վրայ ոչ մէկ հարստութիւն կը հաւասարի գեղեց-

կութեան, առողջութեան և երկայնակեցութեան: Հետեւաբար, հարստութիւնը արտադրող և պարգեւող երեք պատճառները աղէկ պէտք է ուսումնասիրել, ինչ որ լայնօրէն կը բացատրէ ներկայ հրատարակութիւնը:

Ահա թէ իր ամենապարզ լրութեանը մէջ ինչ է «Գաղտնիք գեղեցկութեան, առողջութեան և երկայնակեցութեան» որ Մատթէոսեան հանրածանօթ տպարանէն ի լոյս ելած է խնամեալ և սահուն հայերէնով մը: Այդ տեսակ գրքերու հրատարակութիւնները մեր գրականութեան զարդը կ'աւելցնեն, կեանքը կը քաղցրացնեն, ու կեանքին ճաշակն իսկ կ'աղնուացնեն:

250 երեսէ բաղկացած այս սիրուն գրքոյկը մէկ անգամ կարդալ բաւական է՝ համոզուելու համար թէ այս տեսութիւնները ճիշդ են:

Մ. ՆԱԹԱՆԵԱՆ

ՄԱՅՐ - ՎԱՐԺԱՐԱՆԻ

ՎԵՐԱՇԻՆՈՒԹԻՒՆԸ

Յարգոյ խմբագիր Մասիսի

Մայր Վարժարանի նորոգութեան, կամ ի նորոյ շինութեան առթիւ՝ Հինդլեան էֆ. Իիւզանդիոնի մէջ թելադրած էր այս ձեռնարկութիւնը ընողին, որ վարժարանի ամէն կերպով յարմար չէնք մը կառուցանելու համար՝ խնդրէն հասկցող մարդոց կարծիքը առնուի: Ասի լաւ գաղափար մըն է: Թէ՛ շինողը և թէ՛ հանրութիւնը կը փափաքին անշուշտ որ քանի որ չէնքին համար դրամը պիտի ծախսուի, տրամադրելի գումարով լաւագոյն շինութիւնը կատարուի: Եթէ ես այս մասին գաղափար մը ունենայի յայտնելիք, առ ի չգոյն ուրիշ միջոցի, լրագրի մը պիտի գրէի, պարզելով ամէն ինչ որ կը վախճայի թէ ուշադրութենէ պիտի վրիպէին թեմէս, և որոնք՝ գէթ իմ գաղափարովս՝ շատ կարեւոր առաւելութիւններ պիտի ըլլային նոր շինուելիք վարժարանին համար, եթէ ոչ

անհրաժեշտ պէտքեր: Այսպէս ընելով բան մը կորսնցուցած չի պիտի ըլլայի, մինչև իսկ եթէ թելադրութիւններս անկարեւոր կամ անյարմար նկատուէին անոնց կողմէ որոնք ի պաշտօնէ գործին գլուխը կը գտնուին: Մէկ կողմէ խիղճս հանդարտացած պիտի ըլլար, միւս կողմէ ալ թերեւս իրաւէն օգտակար և ընդունելի բան մը թելադրած ըլլայի: Չունենալով այդ շինուելիք վարժարանի չէնքին մասին օգտակար թելադրութիւն մը, ոչինչ կը գրեմ այդ մասին, բայց կառավարկեմ որ ձեռնհաս անձինք այժմէն իսկ լրագրաց միջոցաւ իրենց գաղափարը յայտնեն: Ապահով կըզգամ որ թերթերու ծնօրէնները, երբ արդարեւ շահեկան գտնեն այս թելադրութիւնը, յօժարակամ պիտի հրատարակեն զրկուելիք նամակները, յօգուտ հանրութեան որու զաւակները պիտի յաճախեն այդ վարժարանը: Այսպէսով Հինդլեան էֆ. ի օգտակար առաջարկը գործնական արդիւնք մը պիտի ունենայ, եթէ իրօք գտնուին մէկ կամ աւելի ձեռնհաս անձինք որոնք նոր կամ օգտակար դիտողութիւն մը ունենան ընելու, թէ ինչպէ՛ս շինուելու է Մայր վարժարանի նոր չէնքը: Եթէ օգտակար կը նրկատէք այս առաջարկութիւնը, խնդրեմ հիւրընկալեցէք զայն Մասիսի մէջ:

Յ. Ս. ԹԱԻՇԱՆՃԵԱՆ

Նիւ - Եօք, 14 Սեպտ. 1905

Ծ. Խ. — Տիար Յովհ. Թաւադեանի առաջարկին օգտակարութիւնը խնդիր չի վերցնել, եւ սիրայօժար հրատարակելով իր նամակը՝ Մասիսի էջերը կը տրամադրենք այս առթիւ գրուելիք յօդուածներու կամ տեսութիւններու որոնք ճարտարապետներու մասնագիտութեան կը վերաբերին, իրաւէ թէ մեր ճարտարապետները քիչ անգամ գրել կը շարժեն իրենց արուեստին վերաբերեալ նիւթերու վրայ, բայց կը փափաղինք որ ներկայ պարագային մէջ բացառութիւն մը ընեն, Մայր վարժարանի վերաշինութեան առթիւ բացատրելու համար, գէթ ընդհանուր կերպով, դպրոցական չէնքի մը յատակաձեւին ու կառուցման պայմանները՝ առողջապահիկ տեսակէտով:

ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ԿՈՆԴԱԿ

ՄԱՂԱՔԻԱ ծառայ Յիսուսի Քրիստոսի ողորմութեամբ Աստուծոյ եւ շնորհիւ Ս. Հոգւոյն եւ կամօք ազգիցն արքեպիսկոպոս Կոստանդնուպոլսոյ եւ Պատրիարք Հայոց Թուրքիոյ:

Սիրեցեալ որդւոց մերոց, համօրէն հաւատացելոց Սուրբ և Ուղղափառ Եկեղեցւոյս մերոյ, շնորհք, սէր և խաղաղութիւն և օրհնութիւն տիրաւանդ:

Տարին յառաջացաւ, կը դիմէ իւր վերջին: Նոր տարին հետեւէն մեզ կուտայ իւր ողջոյն: Նոր Տարւոյն հետ տարեգլխի յիշատակներ կը զարթնուն, նոր բարեմաղթութեանց առիթներ կը ծնանին:

Ո՛հ, որչափ գեղեցիկ է բարեբարել, ներքին անուշութիւն մը կը զգայ մարդ՝ երբ մէկուն աղեկութիւն կ'ընէ: Այդ զգացումը եւս քան զեւս կը զօրանայ, երբ ներքին համոզում մը կ'աւելնայ ըրած աղեկութեան կարեւորութեան վրայ: Ահա թէ ինչո՞ւ աւելի յարգի են այն ողորմութիւնք և այն աղեկութիւնք՝ որք յայտնի և ճանչցուած աղքատասիրական նպատակի մը կը նուիրուին:

Եւ որ աւելի յայտնի և աւելի ճանչցուած և աւելի կարեւոր օգնութեան նպատակ՝ քան Ս. Փրկչեան Հիւանդանոցը: Այն տեղ ամէն տեսակէ և ամէն կարգէ կարօտներ և խեղճեր՝ իրենց համար պատասպարան կը գտնեն: Այն տեղ զանազան ներքին և արտաքին ախտերով նեղուած հիւանդներ՝ խընամք և դարման և բժշկութիւն կը գտնեն: Այն տեղ ջղային յուզմանց հետեւանօք մըսային խանգարմանց ենթարկեալներ՝ կը պատասպարուին և կը խնամուին: Այն տեղ ծերութեամբ, խեղութեամբ, տկարութեամբ և պէսպէս փորձութեամբ անկեալներ՝ իրենց համար ապահով պատասպարան կը գտնեն: Այն տեղ անհայր և անմայր, անօք և անօգնական մանչեր և աղջիկներ կ'ընդունուին, կը սնանին, կ'ուսանին, կը կրթուին, արհեստ կը սովորին, և օգտակար կը դառնան: Այն տեղ իրենց ապրուստ և ապագայ կազմելու համար զանազան արհեստական ճիւղերու մէջ վարժուողներ կը պահուին և կը պաշտպանուին:

Եւ այս զանազան ճիւղերէն օգտուողներ բազմաթիւ են յոյժ: Վիճակագրական ցուցակներ կը յայտնեն թէ վերջին մէկ տարւոյն մէջ միայն ներքին հիւանդութիւն ունեցողներ 1333 հոգի, և արտաքին հիւանդութիւն ունեցողներ 913 հոգի, ըովանդակ 2246 հիւանդներ մէկ տարուան մէջ խնամք են ստացեր: Յիմարներ 439 հատ եղեր են, ծերեր և անկեալներ իրր 250, որբեր և տղաքներ 350է աւելի: Տարուան մը մէջ 3000է աւելի եղեր է պատասպարելոց և ներկայից թիւը:

Այս ամենուն խնամքին համար, իրր 14,000 ոսկի ծախք եղեր է, որուն միայն մէկ փոքր մասը հաստատուեն եկամուտի արդիւնք է, և այս մասին ալ իրր 3000ը Կայսերական շնորհաց հացին և միսին արժէքն է, 2000ը բարեպաշտներու և բարեսէրներու թողած կտակներէ և կալուածներէ և ուրիշ եկամուտներէ կը ստացուի. որ ըսել է թէ միշտ 9000 ոսկոյ համար Հիւանդանոցը բարեսէրներու և ողորմածներու սիրտէն կը սպասէ իւր պահպանութիւնը:

Ահա թէ ինչու ամէն տարի այդ միջոցներուն, հարկ սեպած ենք յառուկ կերպով բոլոր մեր բարեսէր ազգայնոց սիրտերը բախել, թէ մայրաքաղաքիս և թէ գաւառներու մէջ և թէ այլուր, և ամենուն յորդոր կարգալ որ Հիւանդանոցը չմոռնան, և եթէ ամէն անգամ Հիւանդանոցին, օգնութիւն ընելը պիտի յիշեն, Տարեգլխի առթիւ աւելի բան մըն ալ ընեն, իւրաքանչիւր ոք իւր կարողութեան բաւականութեան համեմատ:

Օրհնեալ է Աստուած, մեր աստուածասէր ժողովուրդը ձեռքէ չձգեր երբեք իր Հիւանդանոցը, բայց որպէս զի միշտ տեղեակ ըլլայ, գիտնայ պէտքը և յորդորուի, մեր պարտքն է ամեն բան յստակօրէն պարզել. և կարեւորը ճշդութեամբ բացատրել. այդ է Կանդակիս նպատակը:

Մեր պարտքն է միանգամայն դիւրութեան կերպերն ալ ցուցնել: Այդ դիւրութեանց կարգէն է յուղարկաւորութեանց ծաղկեալաններու արժէքը, եւ պսակադրու-

թեանց ծաղկեփունջերու փոխարէնը, եւ ուրիշ նմանօրինակ ծախուց գումարները Հիւանդանոցին նուիրել, որ բաւական ընդունելութիւն գտաւ եւ տարածուեցաւ: Այդ կարգէն է նաեւ Հիւանդանոցին արտադրած եւ պատրաստած նիւթերը գնել, եւ իրեն մէկ պէտքը լրացուցած ատեն, աղեկութիւն մըն ալ ըրած ըլլալ: Հիւանդանոցի Որբանոցները ունին ատաղձագործութեան, աթոռագործութեան, թիթեղագործութեան եւ կանացի ձեռարուեստներու ընտիր արտադրութիւններ: Հիւանդանոցը կը պատրաստէ ընտիր մոմեղէններ, Հիւանդանոցի պարտէզները կուտան բաւական բերքեր, Հիւանդանոցը ի վաճառ հանած է լուցկիներ եւ ծխաթուղթեր, ասոնք գնելն ալ Հիւանդանոցի դիւրութիւն եւ նպաստ ընծայել է:

Այդ կարգին աւելցուցէք Հիւանդանոցի հրատարակած Փոքր Օրացոյցը եւ Ընդարձակ Օրացոյցը, երկուքն ալ մէկը մէկալէն աւելի խնամքով պատրաստուած, եւ մէկը մէկալէն աւելի կարեւոր հրատարակութիւններ. որպէս զի ամէն ոք թէ եկեղեցական եւ թէ քաղաքային տեղեկութիւններ ստանայ, եւ թէ իւր կենցաղին եւ գործառնութեանց պէտք եղած գիտելիքները առձեռն պատրաստ ունենայ: Մէկ դահեկան միայն կ'արժէ Փոքրը, տասը դահեկան կ'արժէ Ընդարձակը: Ամէն անձ պէտք է ունենայ Փոքր Օրացոյց մը, ամէն գործի մարդ պէտք է ունենայ Ընդարձակ Օրացոյց մը, եւ չկայ մէկը որ այդ ծախքը չընէ: Փոխանակ այս կամ այն հրատարակութիւնները ստանալու. փոխանակ տարբեր հրատարակութիւններու դիմելու, ստացէ՛ք, Սիրելիք, Ս. Փ. Հիւանդանոցի Օրացոյցները, թէ՛ պէտքերնիդ կը լեցնէք եւ լայն կերպով կը լեցնէք, եւ թէ՛ Հիւանդանոցի օգնութիւն մը ըրած կ'ըլլաք, եւ հազարուոր խեղճերուն խնամքին մէջ դուք ալ մաս կ'ունենաք:

Դիտեմ որ տարուէ տարի մեր յորդորներուն վրայ Փոքր Օրացոյցներու վաճառումը բաւական բարձրացած է, եւ քսան հազարէ վաթսուն հազար եղած է, բայց նկատի առնելով՝ թէ Մայրաքաղաքիս մէջ, թէ գաւառներու մէջ եւ թէ այլուր մեր հաւատացեալներուն եւ Հիւանդանոցի համակիրներուն թիւը, շատ բան ըզել չէր ըլլար եթէ վաթ-

սուն հազարի թիւը անմիջապէս կրկնապատուուէր: Ընդարձակներն ալ համեմատաբար շատ քիչ կը ծախուին տակաւին. եւ մեր գործի մարդերը շատ աւելի են, եւ տասը հազար օրինակ վաճառելը մեծ բան չէր ըլլար, թէ՛ պէտ այժմ դեռ կէսին ալ չենք հասած:

Կը յուսամ թէ առաջիկայ 1906 տարուոյ Հիւանդանոցի Օրացոյցները շատ աւելի ընդունելութիւն պիտի գտնեն մեր բարեսէրներու կողմէ, եւ մեր տեղեկութիւնները եւ յորդորները պիտի պտղաբերին, եւ Հիւանդանոցի մատակարարները գեղեցիկ արդիւնքի դիմաց պիտի գտնուին: Պատ. Հոգաբարձութիւնը ջանք ըրած է կանուխ աւարտել հրատարակութիւնները եւ ժամանակին տարածել օրինակները: Հապա, սիրելիք, ամէն հայ հաւատացեալ ստանայ Փոքր Օրացոյցը եւ մէկ դահեկանի նուէրը բերէ Հիւանդանոցի, ամէն շահու տէր Հայ ստանայ ընդարձակ Օրացոյցը եւ տասը դահեկանի նուէրը բերէ Հիւանդանոցի, եւ ամէն տեղ ամէն սիրտէ վկայուի դէպ առ Հիւանդանոցն սրտադին համակրութիւնը:

Յատկապէս կը յանձնարարեմք Գերաշնորհ Եպիսկոպոսաց, Հոգեւնորհ Վարդապետաց եւ Արժանաշնորհ Աւագերիցանց եւ Բարեւնորհ Դահանայից, որպէս զի խօսին ու խրատեն, յորդորեն ու քարոզեն իրենց պաշտօնավարութեան սահմաններուն մէջ, եւ Վիճակներու եւ Եկեղեցիներու մատակարարութեան հսկող ժողովներ եւ Խորհուրդներ եւ Հոգաբարձութիւններ իրենց կողմանէ դիւրութիւններ ընծայեն, Ս. Փ. Հիւանդանոցի Օրացոյցներէն պէտք եղածին չափ ատենին բերել տան, եւ Եկեղեցիներու դռները եւ բանկաները պատրաստ ունենան ի դիւրութիւն բարեպաշտ ժողովրդեան:

Այն որ այրւոյն լուսման օրհնութեամբ ընդունեցաւ եւ բաժակ մը ցուրտ ջուրին անկորուստ վարձք մը խոստացաւ, ընդունի ի բարին բոլոր բարեպաշտ Սիրելեացդ այդ փոքրիկ նուէրը, եւ իր օրհնութիւններով պահէ զձեզ եւ պահպանէ, բոլոր ձեր պարագայիւք եւ տամբ եւ ՆՈՐ ՏԱՐԻ շնորհէ ամէն:

Տուեալ ի Պատրիարքարանէ Կոստանդնուպոլսոյ, յամի 1905 ի Սեպտեմբերի 20 ընդ 427 թուահամարաւ Կոնդակաց:

ՍԵՐ ԿԻՆ ԳՐՈՂՆԵՐԸ

Կնոջական գրականութեան ու կին գրող-ներու հարցը, լայն տեսակէտով մը նկատուած կամ կողմնակի հայեացքներու մէջ, չէ դադրած պարբերաբար զբաղեցնելէ մեր մամուլը, — այն օրէն երբ ծագում առած է ան, — առիթ տալով տեսութիւններու, թեւադրութիւններու, որոնցմէ ոմանք զգալի արդիւնք մը ունեցած են, դեր մը կատարած՝ ժամանակի ընթացքին, և ոմանք ապարդիւն մնացած:

Այդ հարցին մասին ի՞նչ որ ալ ըլլան պարզուած տեսութիւնները, եղած թելադրանքները, յայտնուած բաղձանքները, ան չդադրել երբեք հետազոտելի նիւթ մը ըլլալէ, և պատճառներ ունենալէ իր վրայ լարուած պահելու միշտ՝ ուշադրութիւնն ու մտածումը Մամուլին, որովհետեւ կը ներկայացնէ ուսումնասիրելի բազմաթիւ կողմեր, և իր վրայ խօսեցնելու յատկութիւններով խիստ հարուստ է, ըլլալով մշակման կարօտ անհուն դաշտ մը, գրական աշխարհին մէջ:

Այս տողերուն նպատակն է, իր ընդհանուր մեծ գիծերուն մէջ, նկատի առնել Կնոջական Դրականութեան անունով մեր մէջ ցոյց տրուած գործունէութիւնը, իր սկզբնաւորութենէն մինչև մեր ժամանակը, այն ոգին՝ որ յատկանշած է զայն, և կացութիւնը արդի կնոջական գրական գործունէութեան, ինչպէս այն պատճառները, որոնք արգելք եղած են ու կ'ըլլան կնոջական գրականութեան մը լայն ծաղկումին:

Կնոջական գրականութեան մը ծաղկումը մեր մէջ, հեռաւոր ժամանակներ չերկարաձգուիր, այլ ծագում կ'առնէ բաւական մօտաւոր թուականներէ, որոնց մէջ ցոյց տրուած գրիչի գործունէութեան յիշատակն ու տպաւորութիւնը դեռ թարմ է ժամանակակիցներու միտքին մէջ:

Պոլսահայերու մէջ, գրական այդ գործունէութեան առաջապահ կարելի է նկատել և ամէն իրաւունքով ե՛ն, Տիկին Սրբուհի Տիւսար և Տիկին Զապէլ Ասատուր (Սիւլի):

որոնք հիմնարկէքը կատարած են մեր մէջ կնոջական գրականութեան մը չէնքին, և միտքերու ներշնչած սա գաղափարը թէ, կինն ալ իր իմացականութեան գիտակցութիւնը ունեցող էակ մըն է, թէ ան ալ կարող է ու իրաւունքներ ունի մասնակցելու մտաւորական գործին, ինքզինքը յայտնելու, իր գաղափարները պարզելու, իր ներշնչումները հաղորդելու հասարակութեան, վերջապէս ինքզինքը խառնելու ի՞նչ բանի որ մտաւորականի շրջանակը կ'ընդգրկէ:

Մէկ քանի տեսակէտներով շնորհաւորելի է այս առաջընթացութիւնը: Ատով՝ ոչ միայն հիմը կը դրուէր կնոջական գրականութեան մը, և տեղի կ'ունենար անոր ծաղկումը, որ հետզհետէ պիտի բողբոջէր, այլ նաև ատիկա խիզախում մըն էր ժամանակին տիրող գաղափարներուն դէմ, քանի որ, անանկ ատեն մը, երբ գրական գործերու և գրականութիւն ընելու վրայ հասարակութեան դատաստանը ա՛յնչափ նեղ ըմբռնումներու մէջ կը շրջանակուէր, կիներու գրական ասպարէզ իջնելը, կատարեալ առասպելական բան մը կրնար նկատուիլ, որուն դէմ պէտք էր ոգորիլ, պաշտպանուիլ գիտնալ, և մանաւանդ՝ այդ քայլը առնելու կորովի յանդգնութիւնը ունենալ, ոտնակոխ ընելով ամէ՛ն նախապաշարում ու ամէ՛ն նեղ միտ հայեացք: Կա՛ր ատկէ ետքը իր գրական գործին տէր կանգնելու, վարելու, և պաշտպան հանդիսանալու խնդիրն ալ, զոր իրականացնել ամէն կարողութիւն չի զօրեր:

Հաճոյքով կարելի է արձանագրել որ, դեղեւումներ չեն ունեցած գրական այս աշխատաւորները, և այն կորովով ու համոզութիւնով, որով սկսած են, շարունակած են աշխատիլ, իրենց գործը յիշատակելի ընելու աստիճան, յարատեւելով իրենց իտէալին իրագործումին մէջ:

Իրենց ջանքը, հակադրեցութիւններու ենթարկուելէ ու գաղափարային բաղխումներու նշաւակ ըլլալէ չէր կրնար դիմել ըլլալ:

մանաւանդ միտքերու անպատրաստ ժամանակի մը մէջ՝ այդ տեսակ ձեռնարկներու համար, ու դերձ եղած ալ չէ ատենցմէ, սակայն անոնք կրցած են դիմագորաւել ամէն խոչընդոտի, ընթանալու համար այն ճամբէն ուր առաջանալ իրենց նշանաբան ըրած էին:

Տիկին Տիւսար մնայուն գործ մը կը ձգէ այսօր, իր երեք վէպերով, Մայսա, Արաքսիա, Սիբաղոյս, երեք ալ օտառած մասնաւոր արժանիքներով, որոնց հեղինակը գնահատումի արժանի է՝ լսեցուցած ըլլալուն համար իր ձայնը ընտանեկան լաւագոյն ըմբռնումներու, համոզումներու և աղնիւ իտէալներու մասին Հայ կնոջ դիրքին նկատմամբ:

Վիպասանական սեռին մէջ, գաղափարի պայքար մըն է Տիկին Տիւսարի գրական գործը, զոր պարզած է իր վէպերովը, յարուցանելով կնոջ ընկերային դիրքին հարցը, որ ա'յնչափ արդարացի կերպով մէջտեղ կը դրուէր. — Թէպէտ քիչ մը շատ լայն հայեացքներով, — անանկ աստե՛ն մը, երբ կնոջ դիրքը, ա'յնչափ անտեսուած վիճակի մը մէջ էր մնացած:

Լիովին յաջողած ըլլայ կամ ոչ, իր դերին մէջ, Մայսաի հեղինակին գրական գործը կը մնայ հոյակապ անկիւնաքար մը մեր կնոջական գրականութեան շէնքին մէջ, ուր իր անունը ու դերը մասնաւոր տեղ մը կը գրաւեն, անջնջելի ու անմոռաց, զօդուած նաեւ արժանաւոր յիշատակին իր հրապարակագրական գործունէութեան, գործեր՝ որոնց ամբողջութիւնը զինքը կարեւոր դէմք մը կը հանդիսացնեն մեր կին գրողներու շարքին մէջ, և ամէնէն կարեւորներէն մէկը, որուն դերը ճշմարտապէս մեծ ու աղբեցիկ է՝ կնոջական գրականութեան ծաղկումին ու կազմաւորումին մէջ:

Ժամանակագրական կարգով ու գործունէութեան տեսակէտով, ո'չ նուազ նշանակելի դեր մը ունեցած է նաեւ Տիկին Զապէլ Ասատուր, սա տարբերութիւնով որ, եթէ առաջինը աւելի մնայուն ու կուռ, շեշտակի խօսող գործերով ուղղած է իր գաղափարները հասարակութեան միտքին, Տիկին Ասատուր զայն ըրած է աւելի հրապարակա-

րութեան միջոցով, ո'չ սակայն ուղղակի Տիկին Տիւսարի դատին շարունակութիւնը ձեռք առնելով, այլ տարբեր ուղիի մը մէջ, ներշնչուած գրական ուրիշ ձգտումներէ, տարբեր իտէալներէ: Առանց ամբողջովին նուիրուած ըլլալու Տիկին Տիւսարի դատին սակայն, Տիկին Ասատուր ալ թեթեւ մը չօշափած է դայն, իր Աղջկան մը Սիբաղոյսի կուցիչ վէպով: Իսկ ինչ որ ընդհանուր յատկանիշը եղած է իր արձակ գրականութեան ոգիին, ճշմարիտ կնոջ իտէալին հետապնդումն է, փնտռութեան Հայ տիպար կինը հասցնելու միջոցներուն, այն վիճակին, դիրքին ու ընկերային կացութեան մէջ, զոր լաւագոյնը կը դաւանի ինք: Հրապարակագրական երկարատեւ ու արդիւնաւոր — գոնէ մեզի համար — գործունէութիւն մը կը ձգէ ան իր ետեւը, ուր որչափ տեղ կը գրաւեն կնոջական հարցերը, նոյնչափ լայն բաժին ունին բանաստեղծական հատուածները, նկարագրականները, վիպականները: Իսկ իր գրականութեան մէջ առանձին ու կարեւոր մաս մը կը կազմէ նաեւ բանաստեղծական սեռը, որմէ շատ բան արտադրած է Ժանեալեհերբին արուեստագէտ հեղինակուհին, և բանաստեղծի իրական արժանիքի մը տիրացած: Այս սեռէն իր արտադրութիւնները ամփոփուած կը մնան մեր մէջ հրատարակուող գրեթէ բոլոր հանդէսներուն ու քանի մը օրաթերթերու էջերուն մէջ, ու տաղաչափուած բանաստեղծութիւններու մեծ թիւով փունջ մը կը կազմէ վերջերս հրատարակած իր Յօլիւրը: Տիկին Ասատուր հաւասարապէս ու գեղեցկօրէն յաջողած է թէ՛ արձակ և թէ՛ տաղաչափուած սեռերուն մէջ և ունեցած յիշատակելի դեր մը մեր կնոջական գրականութեան մէջ, ուր առաջնակարգ դիրք մը կը գրաւէ թէ՛ իր բանաստեղծ և թէ՛ իր արձակագիր, հանդիսանալով կարկառուն մէկ Դէմքը մեր կին գրողներուն:

Յաջորդաբար՝ իր նշանակելի դէմք կը ներկայանայ նաեւ Օր. Եւփիմէ Օտեան որ կանխագոյն ժամանակներէ ի վեր, ատենը մէյ մը կ'երեւայ զրական հորիզոնին վրայ, ար-

ձագանգ ըլլալու համար ձայնին հեղինակի մը, միշտ հրատարակութիւնովը թարգմանութեան մը, զոր ա'յնչափ ճարտարօրէն գիտէ վերածել ընագիրէն հայերէնի, ինչպէս իր զմայելի հայացումով Աբբա Գոնսթանթինի:

Կրնայ չմոռցուիլ նաև Ֆրմին, և պատահական ցանցառ թիւով ուրիշներ՝ որոնք կրնան վրիպիլ յիշողութենէ:

Ու այսչափով, կը փակուի թիւը կին գրողներէն հին դէմքերուն: Կը մնայ ճանշնալ նորերը:

* *

Անոնցմէ՝ ամէնէն արժանիքի տէրը, և ա'ն որ կարող գրագիրտուհիի մը համբաւը չինեց քիչ ատենուան մէջ, կը ներկայանայ յանձին Տիկին Զապէլ Սալեանի, որ երկար ժամանակի ու գրական առատ գործունէութեան մը չկարօտեցաւ, հաստատելու համար իր տաղանդը, ձիրքերը և գրական կարողութիւնը: Որոշ ձգտում մը, իտէալ մը չեն յատկանշեր սակայն արտադրութիւնները Տիկին Սալեանի, ու ինք չթուիր հետապնդել մասնաւոր ուղղութիւն մը: Միջազգային գրող մըն է ինք, — pour ainsi dire, ինչպէս պիտի ըսէր ինք, — և կրնայ գրել ամէն նիւթի վրայ, վէպ, բանաստեղծութիւն, ընկերային, նկարագրական, ա'յնչափ ձեռնհասութիւնով ու յաջողութիւնով որչափ մարդ կը փափաքի տեսնել գրուածքի մը մէջ: Ոչինչ ունի իր գրականութիւնը՝ կնոջական ու ընկի: Համալսարանային գրականութիւն մըն է իրը, որմէ ո'ր և է բան թարգմանուելով կրնայ հրատարակուիլ օտար լեզուով մը՝ ու հաւասար ընդունելութիւն գտնել, որչափ հայերէնի մէջ, Աւելի իրր ֆրանսացի կին կը գրէ, քան իրը հայ կին, իր ճաշակները, մտածելու եղանակը, բարքերու ըմբռնումները մարդուած ու հակած ըլլալով ֆրանսական ոգիին մէջ: Այս դիտողութիւնը չնշանակեր սակայն թէ, ամէն կին գրողէ կնոջական գրականութիւն մը՝ կը պահանջուի, և թէ ինչ որ կին գրողի մը քով՝ կնոջական չէ, զուրկ է արժէքէ: Ընդհակառակը՝ Տիկին Սալեանի համար: Իր արտադրութիւնները կը ճաշակուին ա'յնչափ հաճոյքով, որչափ

եթէ ըլլային զուտ կնոջական, և ինք կը մնայ կին գրողներէն նորերուն ամէնէն արժանաւորը եւ ամէնէն փայլուն Դէմքը:

Հիմա կուգանք նորերէն անոնց՝ որոնք իրենց համեստ դիրքին մէջ պղտիկ անուն մը ունին, եւ կը համրուին մեր արդի կին գրողներու թիւին մէջ, իրենց պարբերական ու հազուադէպ հրապարակագրական գործունէութիւնով, հոգ չէ թէ իրենց փառասիրութիւնը այնչափ բարձրաթիւի չըլլայ: Ասոնք՝ են Տիկին Ե. Աւետիսեան (Անայիս), Գ. Զարուհի, Տիկին Զ. Արապեան, Բ. Էլզա և Հայկանոյ Մառք(*):

Ինչպէս յայտնի է, լոկ հրապարակագրական սեռը կ'ընդգրկէ առաւելապէս՝ գործը այս հինգ կին գրողներուն, եւ իրենց գրելը չուղղուիր կնոջական հարցերու, կնոջական ձգտումի մը: Անոնք իրենց գրելը վեր կ'առնեն՝ ամէն անգամ երբ ուղեն դու հացում տալ իրենց գրական մէկ քմայքին, մէկ ներշնչումին, արտադրելու համար գրութեան մը, որ հրապարակագրական պարզ յօդուածի մը համեստ սահմանին մէջ կ'ամփոփուի, իր գրական եւ գաղափարական արժանիքով: Պարզ ակնարկ մը՝ գրական ամբողջական գործունէութեանը վրայ այս

(*)Ծ. Խ. — Ծաղիկի նորագոյն հրատարակութիւնը, իրրեւ կիներու յատուկ Հանդէս, առիթ պիտի տայ անշուշտ վերեւ յիշուած կին գրողներէն անոնց որ իրենց աշխատակցութիւնը կը նուիրեն անոր, գրական աւելի՛ լայն գործունէութիւն մը երեւան բերելու, թէպէտ Տիկին Գ. Զարուհի եւ Անայիս տարիներէ ի վեր իրենց կանոնաւոր աշխատակցութեամբը Բիւզանդիոնի, գրչի այդ գործունէութեան ապացոյցը տուած են արդէն: Դալով Օր. Հայկանոյ Մառքի, ինքը՝ իրրեւ վարիչ-խմբագիրը կնոջական շաքաթաթերթին, արձակին ու ոտանաւորին հաւասարապէս ոյժ տալու առիթ պիտի գտնէ իր թերթին մէջ, նշանակելի դեր մը իրականացնելով այսպէս կանացի գրականութեան շաղկի մէջ և յատկանշելով կնոջական ձգտումներ, ինչպէս փափագ կը յայտնուի՝ կին գրողներու նուիրուած այս Ուսումնասիրութեան մէջ:

գրիչներուն՝ երեւան կը բերէ սա իրողութիւնը թէ, նշանակելի դեր մը չիրականացներ անոնց արտադրութիւնը եւ մասնաւորապէս կնոջական ձգտում մը չի յատկանշեր։ Յանո՛ւն գրական քննադատութեան ան- նըկատ ու անկողմնակալ պահանջին, պիտի ուզէի աւելցնել նաեւ որ, — առանց իրենց փափուկ արժանապատուութիւնը վիրաւորե- լու, — անոնք դժբախտաբար զրկած են ինք- զինքնին գրական դէմքերու հռչակումէն, այն ըմբռնումով՝ որով իրենց անունը պիտի կրնար յաւերժանալ կին գրող Դէմքերու շարքին մէջ, ինչպէս ներկային, նոյնպէս ա- պագային։

Եւ ահա՛, կը տեսնուի որ, կը հասնինք եզրը մեր կին գրողներու սահմանափակ թի-ւին, ու ալ չմնար համրուելիք մէկը, շատ վտիտ թւումի մը մէջ օպառած ըլլալով ա- նոնց ամբողջական խումբին համրանքը։ Ան- չուշտ նկատողութեան չեն կրնար առնուիլ հոս, պատահաբար երեւցող խիստ ցանցառ թիւով կին անուններ։

Ուշագրաւ է սա երեւոյթը որ, քառորդ դարու շրջանի մը մէջ, այսչափ վտիտ եղած ըլլայ բերքը մեր կին գրողներուն, որչափ ալ անոնցմէ ոմանք իրենց նշանակելի անունը ու տեղը ունենան մեր կնոջական գրակա- նութեան մէջ։

Այդ երեւոյթին մէկ յատկանշական կողմն է նաեւ որ, գրագիտութիւններ չեն հաս- նիր նորերէն, յաջորդելու համար նախկիննե- րու, և շարունակելու անոնց գործը, ծաղ- կեցնելու, մշակելու կնոջական գրականու- թիւն մը, որուն հիմերը կան արդէն։

Նկատի առնելով գրական աշխատաւոր- ներու գործելու, աշխատելու պայմանները, մեր մէջ, և ընդհանուր շարժառիթը այն ե- ռանդին՝ որուն մղումով կը յայտնուին ու կը կերպարանուին գրական աշխատութիւն- ները, պէտք էր որ կին գրողները աւելի մեծ թիւ մը, գոնէ հաւասար թիւ մը կազմէին այրերուն հետ, որովհետեւ, ամէն նկատու- մով, մեր մէջ չա՛տ աւելի դիւրին ու նպա- տակայարմար պիտի ըլլար կնոջ մը՝ գրակա- նութիւն ընել, քան այր մարդուն, եթէ

այս տեսակէտէն չեզոքացնենք զարգացումի հարցը։

Ի՞նչ են ուրեմն պատճառները որ, կինները ա՛յսչափ ձեռնպահ են մնացած գրական աշխա- տութեան նուիրուելէ, և կը մնան տակաւին, ամբողջ քառորդ դարու մը շրջանին շատ սահմանափակ թիւ մը միայն հասցնելու աս- տիճան։

Առաջին պատճառը որ զգալապէս կը նշմարուի իրենց մէջ, նախաձեռնութեան պա- կասն է՝, տեսակ մը կնոջական երկչոտ վե- րապահութիւն, որ արգելք է ամէն քայլի։ Գրելու կարողութիւնը ունեցող ո՛ր և է կին որ մտածումը կ'ունենայ ասպարէզ իջնելու և փորձելու իր գրիչը, կը պաշարուի նախա- հոգերով և փափուկ մտմտութեամբ թէ, արդեօք ի՞նչ ընդունելութիւն պիտի գտնէ հասարակութենէն, պիտի ծափուի՞ թէ դա- տափետուի, ինչ որ անուանարկութիւն մը կը նկատուի յաճախ։ Այս մտահոգութիւնը տիրական մղձաւանջը կ'ըլլայ անոր, ու գրե- լու եռանդովը ոգեւորուած կինը, հազար կը չափէ, կը հաշուէ, կը կշռէ, ու իր եզ- րակացութիւնը մի՛շտ սա կ'ըլլայ որ՝ չէրելու որոշումը կ'արձակէ, որով իսպառ կը չքանայ կարողութիւն մը, որ թերեւս, մշակ- ուելով կարենար նպաստ մը ըլլալ գրակա- նութեան մշակումին։ Այս նախանձաւորու- թիւնը որչափ աստիճան մը կարողութեանը անվստահութիւնն է, նոյնչափ հետեւանքն է աւանդական նկատումի մը, որ արմատացած է բոլոր այդ կարգի ներկայացուցիչներուն մէջ իդական սեռին։

Կիններու ձեռնպահ մնալուն երկրորդ ու զօրաւոր պատճառ մըն է, այն քիչ մը նա- խազատմական նկատումը, որուն համաձայն կնոջ մը գրական ասպարէզ իջնելը՝ տեսակ մը ստորնացում կ'ենթադրէ, մանաւանդ եթէ բարձր դասակարգին կը պատկանի։ Աւելորդ է ըսել թէ, ո՛րչափ անիմաստ է այս նկա- տումը, և ո՛րչափ դատապարտելի, մանա-ւանդ անոնց համար՝ որոնք գրական դաս- տիարակութիւն մը ունին և կարողութեան մը տէր են։

Ուրիշ և խի՛ստ զօրաւոր պատճառ մըն

է, գրչի յարձակումներու նշաւակ ըլլալու, անիմաստ դատաւիտութիւններու ենթարկուելու, և գոեհիկ քաջքուքներու առարկայ դառնալու վախը, որմէ ամէն կին իրաւունք ունի ականածելու, յանի որ ատիկա պատիւի ու արժանապատուութեան հետ է որ առնչութիւն ունի: Այս նկատումը անհաւի իրաւացի է, որչափ անկէ իրապէս կը զգուշանան գրելու եռանդը ունեցող կիներ: Դժբաղդաբար վերջին ժամանակներս այդ հոսանքը քիչ մը լայն տարածում գտած է կարգ մը գրողներու գրչին տակ, և կը կարծեմ որ, ա՛ղ իսկ է պատճառը կին գրողներու զգալի մեկուսացումին ու չեզոքացումին: Իրաւացի է այդ նկատումը, որովհետեւ գրական ասպարէզը իջնելու փափաքը ունեցող կին մը իրաւունքը ունի հաշուելու թէ, գրող անուանով ի՞նչ մարդիկ պիտի գտնէ դէմը, որոնք ամէն գոեհիկ լեզուանիութիւն ընելու յանձնառու են, պատրաստ են, ու առիթներ ալ կը փնտռեն:

Եթէ նոր գաղափար մը ըլլայ իրենց յայտնածը, ինքնատիպ մտածում մը, կամ վերջապէս որ և է նկատողութիւն՝ բարոյական, գրական, հոգեբանական հարցի մը շուրջը, որովհետեւ զայն ստորագրողը նոր դէմք մըն է ու կին, պէտք է տեսնել թէ ի՞նչ անճոռնի խճճանքներ, ի՞նչ ստորին սրաբանութիւններ ու ի՞նչ վարնոց կատակներ է որ կը յաջորդեն անոր: Եւ կնոջ մը համար ի՞նչ կայ աւելի վիրաւորիչ ու անհանդուրժելի՝ քան ենթակայ ըլլալ այդ տեսակ բարեկենդանային մասկարկութիւններու: Չէ՞ որ ասոնց տխուր դասերը չեն պակսած ու պակաս չեն տակաւին:

Այս գլխաւոր պատճառներէն ետքը, և ուրիշ երկրորդականներէ, որոնք յարակից լրացուցիչներն են առաջիններուն, և որոնք արգելք կը հանդիսանան կիներուն՝ գրական գործունէութեան մասնակցելու, մտածուի թերեւս թէ, արդեօք էական պատճառ մը չէ՞ նաեւ, կամ ճիշդ չէ՞ որ գրական կարողութեան տէր կիներ կը պակսին, ակնկալուած ու բաղձացուած գործունէութիւնը ցոյց տալու համար: Ասիկա թերեւս շատերու հաստատ համոզումը ըլլայ, և թերեւս ատով արդարացնեն անոնք կնոջական լայն գրական գործունէութեան մը չգոյութիւնը մեր մէջ:

Սակայն հիմնովին սխալ է այդ ենթադրութիւնը: Երբ մօտէն չփութի մէջ գտնուինք իգական սեռի շրջանակներու հետ, պիտի տեսնուի որ յուսացուածէն աւելի կարողութիւններ կան՝ որոնք կը փթանան իրենց մեկուսացումին մէջ: Մէկդի հանելով իգական սեռին դաստիարակութենէ զուրկ դասակարգը, անդին կայ լուրջ զարգացում ստացած և գրական հիմնական դաստիարակութեան մը տիրացող կիներու և աղջիկներու խումբ մը որոնք ձեռնպահ կը մնան գրական գործունէութիւն մը ցոյց տալէ, և մասնակցելէ գրական շարժումին, զանազան նկատումներու հետեւանքով և այն պատճառներուն համար՝ որոնց անդրադարձայ քիչ վերը: Աղջիկներ կան որոնք տիրացած են գրական շատ լուրջ ու բարձր դաստիարակութեան մը և կը ներկայացնեն կարողութիւն մը՝ որ եթէ յայտնուի, քիչ մը պիտի զարմացնէ հասարակութիւնը, ինչպէս նաեւ գրող դասակարգը, որ չա՛տ անհրապաճ ու չնչին հաւատք մը ունի մեր կիներուն գրական ձիրքերուն ու կարողութիւններուն մասին:

Անոնք սակայն կը սիրեն լուռ վերապահութեան մը մէջ մնալ, քիչ մը աւանդական նկատումներու հետեւիլ ուղեւնուն համար, և առաւելապէս իրենց վայել գետին մը չգտնելնուն համար՝ գրական ասպարէզին մէջ, ուր, աս ու ան կողմ, պարզուած տըգեղ երեւոյթները քիչ մը դժգոհանքէ ու սրտեղութենէ ուրիշ բան չեն կրնար պատճառել որ եւ է լուրջ միտքի:

Կնոջական բաղձացուած գրական գործունէութեան մը և միակումի մը համար, պէտք են գրական քաջալերիչ պայմաններ, որպէս զի գրականութիւն ընելու եռանդը և կարողութիւնը ունեցող կիներ՝ նկատումներ չգտնեն իրենց առջև, ընդգրկելու համար այդ ասպարէզը: Եւ միւս կողմէ, կիներու կողմէ պէտք է թօթափումը չա՛տ սովորաւորական դարձած բծախնդրութիւններու, աւանդական նախադաշարումներու՝ հանդէպ գրական ասպարէզին, ինչպէս նաեւ քիչ մը նախաձեռնարկ ոգի ու պզտիկ մը անձնավստահութիւն:

ԻՏԱԼԻՈՅ ԵՐԿՐԱՇԱՐԺԸ

ԻՏԱԼԱՊԵՐԱ

Բարիզեան ուրիշ թերթերու հետ՝ Ժուլու-
նայ լրագիրն ալ թղթակից մը փութացու-
ցած էր դէպի Քալապրիա, Իտալիոյ ահռելի
երկրաշարժէն ամէնէն աւելի վնասուած գա-
ւառը, որուն սրտածմիկ պատկերը նկարագ-
րող վերջին երկու թղթակցութիւններէն կը
քաղենք քանի մը մասեր, որոնք տխուր
այժմէութիւն մը ունին։ Այդ թղթակիցը,
Fernand Hauser, իր նամակները կը հե-
ռագրէ Մոնդէ-Լէօնէէն։—

Երբ մէկը կ'այցելէ բնութեան պարգե-
ներէն զրկուած երկիրներ, հիւսիսի մշուշա-
պատ և ցուրտ երկիրները,—ու դժբաղդներ
կը տեսնէ հոնտեղուանք, խորունկ կարեկ-
ցութիւն մը կը դադայ. բայց կը մտածէ թէ՝
ամէն բան իրաց բնական կարգին մէջ կը
գտնուի և աղքատները բնականաբար աւելի
աղքատ ըլլալու են հոն ուր ցուրտ կընէ՝
քան այն օրհնեալ տաքուկ կլիմաներուն տակ
ուր մարդիկ կ'ապրին կազդուրիչ արեգակն
տակ։ Այսպէս կը խորհէի Քալապրիա ուղևո-
րած պահուս. կերեւակայէի թէ բազմաթի-
սակ թշուառութիւններու ականատես պիտի
ըլլամ, բայց թէ այդ սրտակեղէք տեսարան-
ներուն սաստկութիւնը մեղմացուցած պիտի
ըլլան արեւուն առատ լոյսը ու բարեբար
գաղջութիւնը։ Խաբուեր եմ եղեր։ Ո՛չ մէկ
տեղ թշուառութիւնը այնքան քստմնելի,
այնքան դազիր, այնքան զարհուրելի երե-
ցած էր ինձ՝ քան Իտալիոյ այս երկրին մէջ,
նախասիրական երկիրը Գեղեցկութեան սի-
րահարներուն։

Այո՛, մէկ կողմէն պայծառ երկինքի մը
ու հոյակապ ծովի մը ու միւս կողմէ եր-
կիւղէ, անօթութենէ ու ծարաւէ տանջուող
երկիւղներու պարզած երեւոյթին այս ահ-
ռելի հակադրութիւնը այնքան տպաւորիչ
էր որ պակշեցայ մնացի, կարծելով թէ բան-
դադուանքի մը մատնուած եմ։

Մոնդէ-Լէօնէի աւերակ դարձած դըղ-
եակին բարձունքէն կը նշմարուի ծովը,
իր աղամանդանման կոհակներուն թա-
ւալումովը, և հեռուն՝ պղտոր չողիներու
մէջէն՝ Յոնիական կղզիները և այն ահռելի
կղզին ուր Սդրոմպօլին կը գոռայ, բոցակէղ
լավաներ ժայթքեցնելով իր խառնարանէն։
Մոնդէ-Լէօնէն հեշտալի երկիր մըն է ուր
այնքան քաղցր էր ապրիլը, կապոյտ ալիք-
ներուն մեղմիկ օրօրը լսելով։ Մէկուկէս
երկվայրկեանի մէջ, այս բովանդակ երջան-
կութիւնը խոյս տուաւ. բոլոր տունները, ա-
մէնքը մէկանց, գեհնային շառաչիւնով մը,
կործանեցան, իրենց փլատակներուն տակ
թաղելով. վիրաւորներ որոնք շատ չանցած
դիակներ կը դառնան։ Երջանիկ թէ ապեր-
ջանիկ են ողջ մնացողները. կարելի է ըսել։
Մեռնողները գէթ մահուան հանգիստը ու-
նին. միւսները յուսահատաբար կը գալարեն
բազուկնին՝ իրենց տունները գետնի հաւասար
տեսնելով ու լսելով իրենց զաւկներուն
յուսահատ ճիչերը. «Անօթի եմ, ծարաւ եմ»։
Կիներ կային որոնք այդ ահռելի գիշերուան
մէջ խելակորոյս եղան. ուրիշներ՝ յաջորդ-
կամ վաղայաջորդ օրը։ Սոսկո՛ւմ և արհա-
ւի՛րք ամենուրեք։ Գերաններու կոյտի մը
ներքև կուտակուած մարմիններ գտայ. չորս
օրէ ի վեր հոն կըսպասէին որ գերեզման մը
արուի իրենց։ Բայց որոնք աւելի խղճալի
են, անոնք որ գերեզմանի կըսպասեն թէ...
անոնք որ հաց կը խնդրեն։

Բացէ՛ք, բացէ՛ք, հա՛ց, հա՛ց. լսա՛՞՞ք էք
այս մահաբոյր աղաղակը, չապիկով մը մնա-
ցած մայրերու բերնէ, իրենց վտիտ բազուկ-
ներուն վրայ կրելով մերկ մանկիկներ, ցամ-
քած ստինքներու առջև կատղած, որոնք կը
զարնէին այդ ստինքներուն, զայրացած՝ ո-
րովհետև կաթիլ մը կաթ չէին կրնար քամել
անոնցմէ։ Այդ տարաբաղդ կիները ձեռքեր-
նին կը կարկառէին ու դրամ կուտայի իրենց.
և սակայն տրտմազին նայուածք մը կը ձգէին
դրամին վրայ որ բանի մը չէր ծառայեր ի-
րենց, ըստ որում Մոնդէ-Լէօնէի մէջ ո՛չ մէկ
խանութ կանգուն մնացած էր, և իրենք ո՛չ
թէ դրամի պէտք ունէին՝ որ չէր քուտր,
այդ վայրկեանին, այլ հացի, ջուրի և կաթի։

Արկածեալներուն համար տախտակեայ տաղաւարներ շինելու համար շրկուած զինուորները իրենց պարէնին երեք—չորրորդը անոնց կուտային, բայց միւս քառորդը իրենք ուտելու պէտք ունէին, և ասոնք չէին բաւեր սովեալները կշտացնելու։ Մերունի մը տեսայ որ քաշկոտուելով դնաց մինչև զինուորներուն վրանը, խռպոտ ձայնով մը պաղատելով, ա՛հու՛ա՛, ա՛հու՛ա՛, ջո՛ւր, ջո՛ւր, և ի մի ումպ խմեց բաժակ մը ջուրը զոր կը կարկառէր իրեն գեռատի զինուոր մը, աչքերն արտասուելից։

Եւ ասոնք տեղի կուենան, կը կրկնեմ,
այն հմայիչ երկնքին տակ զոր երգած են
բոլոր բանաստեղծները և որուն կաթօտը կը
քաշեն, իրենց անկողնին մէջ, այն հիւանդ-
ները որոնց կը պատուիրուի արեւոտ կլիմայի
տակ ապրիլ և որոնք՝ եթէ հաց ունին, մին-
չև հոս գալու նիւթական միջոցէ զուրկ են:
Բարկէլիաի մէջ, ուր նոյնպէս ո'չ մէկ տուն
կանգուն մնացած է, կիներ տեսայ որոնք
Տիրամօր պատկեր մը շրջապատած կը գան-
գատէին թէ զիրենք չէր պաշտպանած ա-
ղէտին դէմ ու բռունցքնին կը կարկառէին
ծովուն կողմը, դէպի Սփորմպոլի, զոր կընդ-
նըմարէին թեթև մշուշի մը մէջէն:

Բարկէլիա՛, գեղազուեալս՝ գիւղ ուր այն-
քան հեշտ ըլլալու էր կեանքը՝ արմաւենի-
ներու շուքին տակ, և այնքա՛ն հաճոյալի՛,
տեղացիներուն համար՝ անոր նեղկիկ փողոց-
ները պտտիլ ձմերուկի շերտ մը խած-
նելով կամ թուզ ուտելով. Բարկէլիա՛, ծաղ-
կազարդ գիւղ որուն անուան վերջաւորու-
թիւնը կը յանգաւորի իր պարտէզներուն
մէջ բուսնող շատ մը ծաղիկներու անունին
հետ. Բարկէլիա՛, ուրախութեան ու բնաս-
տեղծութեան գիւղ մը՝ երէկ, այսօր սրտա-
ճմրիկ տառապանքի և ահռելի ցաւերու գիւղ
մը: Փլատակ տուններու սեմին առջև, խումբ
մը կիներ կը ջանան մոռցուած առարկայ մը
գտնել գաճեղէններու և գերաններու կոյ-
տերուն մէջ. և հա՛ա՛ անոնցմէ մէկը՝ զար-
հուրած՝ կընկրկի. փլատակներուն տակէն
մեռած տղայ մը դուրս քալած էր. բոլոր
կիները կը կանչուէին ու խոյս կուտան՝

հերեմիին խաչակնքելով: Կատու մը կը մօտենայ, մլաւելով անօթութենէն, կը տեսնէ զխակը, կը հոտւըտայ, ու ան ալ կը փախչի զարհուրած:

Ճշմարիտը ըսելով, նախամեծար պիտի
սեպէի ուրիշ նիւթի մը վրայ գրել. ըն-
թեքողոյներս պիտի կարծեն թէ կը չափա-
զանցեմ. թող վստահ ըլլան թէ տեսածներս
է որ կը նկարագրեմ: Բիձձօի մէջ, որուն
փողոցները անանցանելի դարձած են՝ աւե-
րակներու կոյտերէն, կիներ տեսայ որոնք
վեց օրէ ի վեր բերաննին փշրանք չէին դրած
ու հինգ գիշերէ ի վեր կարծր գետնին վրայ
կը պառկէին. բարեբաղդաբար օդը ցուրտ
չէր. ես ինքս փորձով գիտեմ, վասնզի երկու
գիշեր անցուցի արկածեալներուն մէջ, աւա-
զին վրայ. նոյն իսկ տաք կընէր... ու ա-
ւելի տաք ըրաւ երբ երկու անգամ գետնին
չարժիլը զգացի իմ ներքեւ:

Երբ Բարկիրլիա հասնիս, անաբեկ կը մնաս, ոսկրուտ դէմքով, նիհար ձեռքով կիններ վրադ կը յարձակին, խապոտ ձայնով աղաղակելով. «հաց, ջուր, Տիրամօր սիրո՛ւն, օգնութեան հասէ՛ք մեզի»։ Այդ կիներուն մէջ գեղեցիկներ ալ կան, ողբերգական գեղեցկութեամբ կիններ. աչքերնին դեռ լեցունած է այն արհաւիրքով որ պատեց զիրենք երկրաշարժին գիշերը, ձեռքերնին կը դողդողայ դեռ ու իրենց տփռունած շրթունքները կը կափկափեն. յայտնի կը տեսնուի որ այդ դժբաղդէ էակները բունն ճիգ մը կընեն օտարականի մը առջեւ չարտասուելու համար։ Հագուստնի՛ն. հէ՛գ կիններ, հագածնին ո՛չ չըջաղգեստ է ո՛չ շապիկ, այլ աճապարանօք կարուած պաստառի կտորուանք ուրոնք վայրենուհիներու կերպարանք մը կուտան անոնց, արեգակին տակ իրենց մերկ սրունքները, կոկորդները ու թեւերը ցուցադրող։



ԶՏԵՍՈՒՅԻՒՆԸ ... ԳՐՈՂՆԵՐՈՒ ՔՈՎ

(ԵՐԿՐՈՐԴ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ)

«Տասը՝ ոսկի... դեղին, փայլուն; տասը ոսկի...»:

Այս ազգադակը կը բարձրացնեն ու կը կրկնեն Արեւ. Մամուլ և իր գրողները, իբրև միակ յենակէտ իրենց բոլոր ըսելիքներուն՝ Մասիսի «Դրչի հեգնանք» խմբագրականին դէմ: Կըմբռնենք որ կարգ մը թերթերու և գրողներու վրայ դրամն ալ իր նեղգործութիւնը ունենայ, և խմբագիրներ իրարու երեսի տան նիւթապաշտական նկատումներ, այս կամ այն ձեռնարկութեան թեր կամ դէմ գրուելուն առթիւ, որուն մէջ շահու ակնկալութիւն մը կընդնշմարուի. բայց հակալքուական մրցման մէջ ալ դրամի խնդիրը առաջ քշել չարունակ՝ անոնց դէմ որոնք այդ մրցման օգտակարութիւնը կը շնչտեն, պէտք է խոստովանիլ դժբաղդաբար, թէ... չտեսութիւն է պարզապէս: Այս շարթու Նուրհանն էր որ կը յեղեղէր 1) ոսկիի հեռապատկերը, Իզմիրեան շաքաթաթերթին մէջ, գալ շարթու տեսնենք ո՞վ պիտի ըլլայ միեւնոյն բանը ըսող: Արեւ. Մամուլի «Ճերմակ ու սև» յօդուածներու շարքին հեղինակը կը ճգնի համոզել իր ընթերցողները, թէ Մասիսի խմբագիրը անո՞ր համար միայն կը պաշտպանէ հակալքողական յօդուածներուն հանրօգուտ հանգամանքը ու կը բացատրէ այս մրցման հաստատիչին զուտ մարդասիրական գեղեցիկ գաղափար մը յղացած ու իրականացուցած ըլլալը, որովհետեւ... թեկնածու է եղբի տասը ոսկիի մրցանակին: Երանելի մարդուկը միտքը չի բերեր գոնէ, թէ Մասիսի խմբագիրը ինք՝ անձնապէս՝ որ և է հակալքողական յօդուած չի գրեց, — ինչ որ դժուար չէ՝ քսան տարուան գրողի մը համար որ ամէն տեսակ նիւթեր ընդգրկած է, — և հետեւաբար մրցանակ սպասելու իրաւունք չունի, եթէ թեկնածու ըլլար իսկ: Բայց եթէ Նուրհան մոռցնել տալ կուզէ այս յայտնի իրողութիւնը, չենք կարծեր որ ըն-

թերցողներուն ուշադրութենէն վրիպի: Իսկ թէ Մասիսի մէջ հրատարակուած որ և է յօդուած մրցանակ շահելու պարագային, թերթին խմբագրութիւնն ալ հաւասար գումար մը պիտի առնէ, այնքան հեռաւոր ակնկալութիւն մըն է այս զոր ենթադրաբար մատի ծայր փաթթելով՝ դրամի խնդիրը առաջ քշելը բաւական տգեղ բարք մը ցուցադրել է լրագրական բանավէճերու մէջ: Մնաց որ Մասիսի խմբագիրը ինք առաջինը եղած է մտածող, թէ մրցանակի արժանի լաւագոյն յօդուածները երեւցան ուրիշ թերթերու մէջ, և հաւանական կը գտնէ որ Բիւզանդիոնի մէջ Վահան վրդ. Տէր—Մինասեանի հրատարակած համբաւաւոր «Սոստովանութիւն»ը կամ Արեւ. Մամուլի մէջ Արամ Անտոնեանի հրատարակած հեքեթունակ յօդուածը շահին առաջին կամ երկրորդ մրցանակները (10 և 5 ոսկի) և կամ ուրիշ թերթերու մէջ երեւցած ուսումնասիրութիւններ՝ գիտական, ընկերային ու ընտանեկան անասկէտներով: Եւ կը փափագենք որ այսպէս ըլլայ:

Ահա՛ մեր բոլոր պատասխանը այն չտես գրիչներուն որոնք «հորիզոնին վրայ փալփացող ոսկիներ» կ'երազեն ու անոնց ակնկալութիւնը կը վերագրեն հրապարակագրի մը որ համարձակութիւնը ունեցած էր անձաշակ ու անաղնիւ բան մը նկատել՝ Թաւաճեան էֆ.ի նման դրամով ու գրիչով հաւասարապէս օգտակար հանդիսացող անձնաւորութիւն մը ծաղրանքի առարկայ դարձնելը, կարգ մը սրամտութիւններ քշելու մարմաջով: Ու պիտի շարունակենք ըսել, — հակառակ անոր՝ որ իրենց հեզնոտ գրիչը հիմակ ալ Մասիսի խմբագրին դէմ կը դարձնեն այդ պարոնները, — թէ որչա՛փ ալ մեզան ու esprit սպառնեն, ինչքա՛ն ալ գոռում - գոչում հանեն 5—10 ոսկիի մրցանակի պատրուակէն առաջնորդուած, միշտ իրենց դէմ պիտի գտնեն ընթերցողներու լուրջ ու ազնուախոհ մաս մը որ, իրաւ է թէ կը խնդայ՝ երբ Նինիի մը պատմութիւնը կարգայ կամ սիրային յորոնիկ մը, բայց երեսը կը թթուեցնէ՝ երբ բարեգործ ու գրասէր վաճառականի մը հասցէին ուղղուած կը կարգայ միեւնոյն գրիչով գրուած հեզնանքներ:

Հաւանական է որ ինք՝ Թաւանճեան էֆ.ն՝ չազդուի այս կարգի գրուածքներէն, ինչպէս ցոյց կուտայ իր caractèrը որ արտացոլաց իր «Ինքնակենսագրութեան» և յարակից շահեկան նամակներուն մէջ զորս հրատարակեց Բիւզանդիոն: Բայց ինչիրը հրապարակային է և լրագրութեան կը պատկանի. և Մասիս, իբրեւ առաջին հրատարակիչը հակալքողական մրցման Յայտարարութեան, — զոր մեր բոլոր թերթերուն հետ՝ այնքան համակրանքով ողջունեց նաև Արեւ. Մամուլ, որ հիմակ ելեր գրել կուտայ Նուր հանին թէ «Իբրեւ քաղաքավարական պարտք՝ քանի մը խօսք ալ իր կողմէ աւելցուցած էր» — իրեն համար անկեղծ և ուղիղ ընթացք մը կը նկատէ՝ առջի վայրկեանէն ունեցած տպաւորութիւնէն չլիզիլ՝ հակալքողական մրցման օգտակարութեանը մասին, հոգ չէ թէ մէկ — օրէն միւսը իրեն հակառակորդ դարձող գրիչներ յամառին դեռ ըսել թէ, 10 ոսկիի մրցանակի ակնկալութիւն կայ գործին մէջ, եթէ մեր վերեւ գրածներէն արդէն իսկ չի համոզուեցան իրենց այս գոհնիկ փաստին անգոյութեանը:

Վերջին խօսք մըն ալ, խնդրին այս տեսակ գոյն մը տալ ուզուելուն առթիւ, որ ինչպէս պէճանք կ'ազդէ այս տողերը գրողին՝ գուցէ ձանձրոյթ պատճառէ նաև ընթերցողներուն ալ, որոնք այլապէս հետաքրքրաշարժ վէճեր կըսպասեն մեր գրական կոչուած չաքաթաթերթերէն՝ քան 10 ոսկիի յաւիտեական յանկերգի մը կրկնութիւնը:

Երկու տարի առաջ, երբ գրաւոր քարոզներու մրցում մը հաստատեց Թաւանճեան էֆ. Ս. Պատրիարք Հօր հովանաւորութեամբ, այդ առթիւ չաքաթաթերթ Մաղիկին մէջ երեւցած քննադատական յօդուածի մը, — որ գոնէ հեզնական չըլլալու արդարացումը ունէր, — պատասխանեց Մասիս «Դրիչ և Դրամ» վերնագիրը կրող խմբագրականով մը: Այն ատեն ալ մրցանակի ակնկալութիւնը ունէինք, ո՞վ անարժաթասէրդ Նուր հան և համախոհք:

ՕՐՈՒԱՆ ՆՕԹԵՐ

Ազգ. Պատրիարքարանի կողմէ հրատարակուած Պաշտօնական Յայտարարութեան համաձայն, վաղն առաւօտ, կիրակի, Մայր Եկեղեցւոյ մէջ գոհարանական հանդիսաւոր մաղթանքներ կը կատարուին, Կայսերական ծննդեան բարեբաւտիկ Տարեդարձին առթիւ: Արարողութեանց պիտի նախագահէ Ս. Պառիարք Հայրը՝ շրջապատուած եպիսկոպոսական դասէն, քարոզիչ վարդապետներէ ու աւագներէցներէ: Գոհարանական Մաղթանքին ներկայ կը գտնուին Կրօն. և Բաղ. Ժողովներու անդամները, Տեսուչ Խորհուրդներու, Հոգաբարձութեանց, Խնամակալութեանց, Թաղ. Խորհրդոց ներկայացուցիչներ և բաղմութիւն ժողովրդեան: Արարողութեանց աւարտումէն ետք, Ս. Պատրիարքը կայս. Պալատ կ'երթայ՝ յանձն. Ազգին շնորհաւորական ու երախտագիտական Ուղերձ մը մատուցանելու յոտս Գահոյից Ն. Կ. Վեհափառութեան:

* * Օրերէ ի վեր մեծամեծ պատրաստութիւններ տեսնուած են շքեղապէս լուսազարդելու համար վաղը գիշեր՝ Ազգ. Պատրիարքարանը, Երուսաղեմատունը, Ս. Փրկչեան Հիւանդանոցը, Խասգիւղի Գալֆանան Որբանոցը, Եկեղեցիներու և վարժարաններու ճակատներն ու դուռները, ինչպէս նաև Ս. Պատրիարք Հօր բնակարանն՝ ի Բերա, բարձրաստիճան եկեղեցականներու և բոլոր ծանօթ ազգայիններու բնակարանները՝ մայրաքաղաքիս առէն կողմը:

Պարսկական դեսպան Միրզա Բիղա Խանի Կ. Պոլիս վերադառնալուն առթիւ, Ս. Պատրիարքը բարի-գալստեան այցելութիւն տուաւ Ն. Վսեմութեան:

* * Դպրեւանքին փոխ-վանահայր Տ. Թորգոմ Վրդ. որ նորընծայ արեղաները մայրաքաղաքս առաջնորդելէ ետքը՝ Արմաշ վերադարձուց, Նիկոմիդիա գտնուած միջոցին յայտարարեւ է թէ բացորոշապէս որոշած է հրաժարիլ իր պաշտօնէն եւ իր ծննդավայրը՝ Պարտիզակ՝ քաշուիլ իբրեւ քարոզիչ:

* * Ս. Էջմիածնէն Պատրիարքարան ուղ-
ղուած պաշտօնագիր մը կը ծանուցանէ թէ,
Ս. Հայրապետը նկատողութեան առնելով
Գարեգին էֆ. Նշանեանի ըրած դիմումը Ն.
Ս. Օծութեան մօտ, լուծած է անոր առաջին
պսակը եւ հրամայած է ներողամտաբար՝
վաւերական նկատել երկրորդ պսակը Տիկին
Մառիի հետ (ծնեալ Մըճիկեան), ընդունելով
Գարեգին էֆ. ան եւ Տիկին Մառի Գ. Նշան-
եանը մայրենի եկեղեցւոյ ծոցը, իբրեւ օրի-
նաւորապէս ամուսնացեալ այր եւ կին :

* * Թիֆլիզի Գայեանեան Օրիորդաց վար-
ժարանն ալ, որ դպրոցներու գրաւման հե-
տեւանօք՝ ռուս վարչութեան ձեռքը անցած
էր, վերադարձուեր է հայ հասարակութեան,
իր գոյքերով միասին : Այս առթիւ դիմում
եղեր է կառավարութեան, ստանալու հա-
մար այդ վարժարանին դրամագլուխը, մօ-
տաւորապէս 25,000 ռուպլի,

* * Պարսից Շահը Սանութեան տիտղոս
շնորհեր է մայրաքաղաքի պարսկական դես-
պանատան բժիշկ Տօքթ. Սամուէլ էֆ. Լապ-
ճինճեանի, ինչպէս ծանուցին օրաթերթերը :

* * Բողոքական ազգայիններէն Ստեփան
էֆ. Մակարեան, նախկին չըջանաւարտ Ռօ-
պէրդ Բօլէճի, որ երբեմն Պարտիզակ եւ
յետոյ Կ. Պոլիս՝ ուսուցչութեամբ կը պա-
րապէր, չարաթ օրը մեռաւ Աղզ. Հիւանդա-
նոցին մէջ, անբուժելի հիւանդութեան մը
հետեւանքով : Յիսուն տարեկան էր եւ կը
թողու երեք անչափահաս զաւակներ ու այրի
մը : Մակարեան էֆ. շատ անգամ կը քարո-
ղէր Կէտիկ-փաշայի Աւետարանական Մատ-
րան մէջ, և ինքն էր որ, Մասիսի ողբաց-
եալ հիմնադրին՝ Կարապետ էֆ. Իւթիւճ-
եանի գերեզմանին վրայ դամբանական մը
խօսեցաւ Շիշլիի գերեզմանատան մէջ,
թաղման պահուն :

* * Սիսէն կը հաղորդեն թէ Կիլիկիոյ Ս.
Կաթողիկոսը բացեր է Ժառանգաւորաց վար-
ժարանը՝ 2) աշակերտներով, անոր տեսչու-
թիւնը յանձնելով նախկին ուսուցչի մը, Տ.
Մեսրոպ վրդ. Երէցեանի :—Դարձեալ Սիսէ
կը հաղորդեն թէ Տ. Տ. Սահակ Ս. Կաթո-
ղիկոսը՝ թեմական ինչ ինչ գործերու կար-
գադրութեան համար սեպտ. 17ին Ատանա

ուղեւորեր է ընկերակցութեամբ Ս. Աթոռին
միաբաններէն Տ. Մկրտիչ և Տ. Վաղարշակ
վարդապետներու :

ՀԱՐՍԱՆԵՎԱՆ ՀԱՆՊԷՍ

Երկուշաբթի օրը, Բերայի Ս. Երրորդու-
թիւն եկեղեցւոյն մէջ տեղի ունեցաւ, հան-
գուցեալ Յովհաննէս էֆ. Էսաեանի որդւոյն՝
Լեւոն էֆ. Ի պսակադրութիւնը՝ Օր. Վար-
դանոյ թօփալեանի հետ, դուստր Ալիքսան
էֆ. Թօփալեանի, կնքահայրութեամբ փեսին
հօրեղօր Մկրտիչ էֆ. Էսաեանի : Էսաեան
և Թօփալեան ընտանեաց անդամներն ու
երկսեռ հրաւիրեալներու ընտրեալոցն բազ-
մութիւն մը լեցուցած էր եկեղեցին : Հո-
գեւորական դասուն գլուխը կը զանուէին
Տ. Հմայեակ եպիսկ. Դիմաքսեան և Տ.
Դէորդ եպիսկ. Երէցեան : Պսակի արարողու-
թենէն ետք, Երէցեան Սրբազան պարադա-
սին յարմար գեղեցիկ քարոզ մը խօսեցաւ,
զոր վերջացուց՝ մաղթանքներ ընելով նո-
րապսակ ամուլին երջանկութեանը համար,
օրհնելով Էսաեան և Թօփալեան ընտանիք-
ները, և մասնաւորաբար շնչեղով կնքհայր
Մկրտիչ էֆ. Էսաեանի արժանիքն ու բարե-
մասնութիւնները, և յիշատակելով անոր բա-
րիքները եկեղեցական ու կրթական հաստա-
տութեանց : Գարողիչ Սրբազանը օրհնեց
նաև յիշատակը փեսին հօր՝ Յովհաննէս էֆ.
Էսաեանի :

Արարողութեանց աւարտումէն ետքը,
հարսնեւորներն առաջնորդուեցան Սըլանտիտի
հիւրասրահը ուր չքասեղանի մը շուրջ, շը-
նորհաւորութիւններ ու մաղթանքներ ուղ-
ղուեցան համակրելի ամուլին, որ ընդունեց
նաև շնորհաւորական բազմաթիւ հեռագիր-
ներ, չքեղ ծաղկեփունջեր և հարսանեկան
ծանրագին ընծաներ :

Նոյն իրիկունը, Տ. և Տիկին Լեւոն Էսա-
եան ձեպընթաց կառախումբով մեկնեցան
մայրաքաղաքէս Եւրոպա, զրօսական ուղեւո-
րութիւն մը կատարելու :

Հիմնադիր—Կ. Ս. Իիթիիճեան
Տէր եւ Տէօրէն—ՏՌԲԹ. ԵԴՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ

Տպագրութիւն ԱՐԵՒԵԼԻՔ Օրագրի

CAISSE PATERNELLE

ՔԷՍ ԲԱԴԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՁ 1841 ԻՆ

ԿԸ ԳՈՐԾԻ ՅՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿՇՈՒՆ ՏԱԿ

Ակիզբէն ի վեր ապահովագրեալներու եղած վնասում 300 միլիոն ֆր.
Ակիզբէն ի վեր արձանագրեալ ապահովագրութիւն 700 միլիոն ֆր.

ԸՆԹԱՅԻԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԻՔ ՅՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԳԼՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏ

62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց գումարին վրայ պահեստի համեմատութիւնն է 74% . որով ՔԷՍ ԲԱԴԵՌՆԵԼԻ ընծայած երաշխաւորութիւնը գէր ի վեր կը հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցոյց տուած երաշխաւորութեանէն:

Ընկերութեան վարչական Խորհուրդը կազմուած է Յրանալի մէնէն նշանաւոր դրամատէրներէն. ինչպէս

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Յրանալի երկաթուղեաց ընկերութեան եւ Քրէտի Լիօնէի վարչական Խորհրդոյ անդամ.

Մ. ՄԱՐԲԻ ՏԸ ՖԼԵՒ, Դրամադրանդիք ընկերութեան վարչական Խորհրդոյ անդամ.

Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԷՆ ԿԻԼՀԷՄ, նախկին գանձապահ.

Մ. Օ. ՄԱԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Քրէտի Լիօնէի.

Թուրքոյ Տնօրէն Գ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ
Պալիս, Սաւթեան-Համամ, Բասաթ Բաթըրճըզլու

Ընկերութեան մաս, տեղեկութիւն առնելու համար դիմել Քրէտի Լիօնէի.

ԾԱՆՈԹ. — Շահաւոր դիմել պիտի տրուի այն ֆնֆիլից որ կարեւոր արդիւնք մը իւր ազորած քլլայ անձնապէս: 10—10

ԱԴԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամեն տեսակ քօհաֆիլի ապրանց

Մեծ—Շուկայ, Բիւրքէնիքու դրան կից, Թ. 41—43

Նայնպէս, արանց եւ կանանց ճաշակար հովանոցներու վաճառատուն, Պալիս, Սաւթեան—Համամ, Միտիլի Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ թօհաֆիլի վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յառակ հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն տեղանքութիւն, եւ դիւրամատ չելի գիններու առաւելութիւնն ալ կ'ընծայեն հասարակութեան:

Ադամ վարդեան մեծապէս գով թողւած է իրաւունքով յանձնարարները:

Կէսք է որ Շուկայ, Ելլող մէն ընտանիք այցելէ անգամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հաշուու համար: 10—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զտ, մասնագիտաբար եւ երկար օտարներէ ի վեր կը դարձնէ ստամոքսի, աղեաց, միզային ճանքաներու հիւանդութիւնները, ջրային տկարութիւնները, հին եւ նոր գաղտկան ախտերը, Այս վերջին ախտերը՝ առանց ստամոքսի խանգարման եւ նարազայն մեթոաներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի մմէն օր կէս օրէ վերջը, Զարեգը թիւ օրերը միայն ճիւղ: 10—10

ԱՌԻԹԵՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵԼ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հ Ե Ր Ճ Ա Յ Ի



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Գոհարեղեմներու, ամեն ճեսակ կահ կարասիներու եւ ամենեւնի նորածել

հագուստներու, եւլն.

Պատիւ ունինք ծանուցանել պատուարժան հասարակութեան թէ՛ մեր վաճառատանց ապրանքներուն անսակեքը աւելի ճօխադնելու ու մեր յարգելի յաճախորդաց աւելի գոհացում տալու նպատակաւ, ՈՍԿԵՐԶՈՒԹԵԱՆ վերաբերեալ ամէն տեսակ ապրանքներէ զտաւ. կրներու եւ ալրերու համար՝ եւ մեծ ու փոքր ամէն տարիքի յատուկ ԶԳԵՍՏԵՂԵՆՆԵՐՈՒ, ճերմակեղէններու եւ (թօհաֆիէ) ու միտնգաժայն ամէն տեսակ առաջնակարգ ԿՍՐԱՍԻՆԵՐՈՒ (ճեղուկի լամբաներ, օֆիսէներ եւ այլն.) ճօխ մթերանաց մը հաստատած ենք. խիստ դիւրամտալիլի գիներով, եւ կանխիկ ու ապառիկ պայմաններով:

Արդ՝ կը հրաւիրենք մեր համակրելի յաճախորդները, որ հաճին դիմել վերայիչեալ վաճառատները, ուրկէ տնտեսական տնտեսական գոհունակութեամբ պիտի մեկնին:

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարկւրին 20 կանխիկ եւ մնացեալ գումարին հարկւրին 5 շաբաթական վճարմամբ:

2. Կանխիկ գնողներու համար հարկւրին 5 զեղչ:

3. Կանխիկ ծախում ապրանքներէն միմիայն աղամանդեալ, գոհարեղէնները երբ գործածուած բայց ա՛ն ինչո՛ւ մնաղած ըլլան՝ հարկւրին 10 զեղչով եւ կտուներն: Իսկ ապառիկ ծախում եւ ա՛ն ինչո՛ւ մնացած միմիայն աղամանդեալ, գոհարեղէններն ալ հարկւրին 15 զեղչով եւ կտուներն:

4-10

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Յ. Գ. Շարաճական վճարմանց համար հաւաքիչներ ընդմիշտ պատրաստ են:

ՄԵՆ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐԶԱՅ ՓՈՂՈՅ, ԹԻՒ 13 Կ. ՊՈԼԻՍ



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԴԵՂ, ԿԵԱՆՔԻ, ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆՔ ԱՐԿԱՄՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուքազով արտոնուած

Կեդրոնատեղին Բեդերսպուրկ, իրեն յատուկ չէնք:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր Զպաւմաններով ապահովագրութեան կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԴԵՂԻ, ՓՈԽԱԳՐՈՒԹԵԱՆ ՎՏԱԳՆԵՐՈՒ, ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱՄՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈԳԵԿԱՌՔՈՎ ԵՒ ՇՈԳԵԿԱՌՔ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱՄՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ կտուներու ղէմ:

Ընկերութեան դրամագլուխը, ամբողջապէս վճարուած

10,666,666 ֆրանք

Նրաշխաւորութեան գումար աւելի քան

149,852,000 »

Ընկերութեան ապահովագրութեան վճարուած դրամագլուխ եւ մնացեալ հատուցում

355,840,000 »

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տոկոս

64,553,800 »

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին. Ազարեան Խան, Վոյվոտա, Դաւաթիա:

4-10

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐԴԵՀԻ ԵՒ ԿԵՆԱՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԿԱՆ ԸՆԿ.

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

Հ Ի Դ Ե Հ Ի Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	274,000,000	Փր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

Կ Ե Ն Ա Ց Ճ Ի Ի Ղ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ վնասք	129,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատուի 60% — ինչ որ «Իւնիոն»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ԶԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՁ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղջեայ գինեւոյ: Նպաստաւոր պայ- պաններ անհամեմատ կերպով աւելի գերազանց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան մայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Իւնիոնի ապահովագրուողք ԶԵՐԾ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնք կենթարկուին միշտ այն անձինք, որ շահաբաժիններու բարդման (accumulation des bénéfices) ՅՈՒՐԻ եւ ՎԵՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապա- հովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելիի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Քաթրքը Օղլու

Մասնաճիւղ Ղալաթիա, Իսայէթ Խան:—Դործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքաց մէջ

1-10

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԵՆ

ԿԱՅՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԷՆՆԱ)

ՊԱՏՈՒԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ.

ԴՈՒՐԻՍ ԼՈՒՐ ՏԵ ՊԱՎԻՒՐ

ԼԱ ԷՍԹՐԷՅԵԱ

Ապահովագր. Ընկ. ընդգրկմ հրդեհի եւ ծովային ահապանքներու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամաւունքն է Ի Կ. Պոլիս, Քոնստ Լիօն

Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՏԵԱՆ

Դրասնեակ, Պոլիս, Ալեքսանդր Խան,

1-10

L ACONFIANCE



ԼԱ. ՔՕՆՖԻԱՆՍ

ԿԵՆՍԱՑ ԱՊԱՀՈՎԳ. ԸՆԿ.

ՀԻՄՆԵԱԼ Ի ՔԱՐԻՉ 1875ԻՆ

Կը գործէ ուղղակի ժրանս. կառավարութեան հսկողութեան ներքեւ

Ընթացիկ ապահովգր. 339 ՄԻԼԻՈՆ Ֆր.

Դրամագլուխ եւ պահեստ 38 ՄԻԼԻՈՆ Ֆր.

Ընդ. գործակալ Պոլսոյ եւ գաւառաց

ԱՐԱՄ Ս. ԳԱԼՖԱՆԱՆ

Պոլիս, Հանգօրու խան Խօ. 53

Դաւանները պատուաւոր գործակալներ կը փնտաւին: 26—50

ՆԱԶԱՐԷԹ ԽԱԶԷՐԵԱՆ

Փ.Ա.ՍՏԱՐԱՆ

Պոլիս, Մարբուճնըլար. Պարնաքան խան Թիւ 26

Ամէն կորգի դասեր կը ստանձնէ եւ խնդրոյ առարկայ եղած գործերու համար թէ՛ բերանացի եւ թէ՛ թղթակցութեամբ անակցութիւններ կը կատարէ եւ կործինք կը յայտնէ, կը խմբագրէ եւ կը թարգմանէ դասերու եւ առեւտրական ու սովորական պայմանագրութեանց վերաբերող թուղթեր:

Ուրբաթ օրերը մինչեւ կէս օր ձգտաւար խորհրդակցութիւն կը կատարէ եւ կործինք կը յայտնէ:

Ապահովագրական գործառնութիւններու եւ ի մասնաւորի կեանքի ապահովագրական ընկերութեանց նկատմամբ անհրաժեշտ եղող տեղեկութիւնները ձեռնարկ կուտայ:

Կը յանձնարարէ որ մինչեւ օր այս մասին կարեւոր եղած տեղեկութիւնները իրմէ չառացուին, ապահովագրութիւն չի ստորագրուի: Ապահովագրական վնասուց հասուցման գումարներու եւ փոխարժէքներու գանձումը եւս կը ստանձնէ: 16—40

ԼԱՏԱՍՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐԼԻՆ, ՄԵԾԻ ՓՈԼԿՈՑ ԹԻՒ 200

Կալանա-Սէրայի Հիսէին զէմ

ԳԵ. ՆԵ. ՇՐ. օրերը առաւօտեան կանու-

խեն մինչեւ իրիկուան ժ. 11 1/2

ԲԵ. ԳԵ. ՈՐ. օրերը 6են մինչեւ 11 1/2

Կիրակի օրերը ժամագրութեամբ 6—10

PHOENIX ASSURANCE L Co.

“ՖԻՆԻՔՍ”



ՀԻՄՆԵԱԼ Ի ԼՈՆՏՈՆ 1782 ԻՆ

Կը ԳՈՐԾԷ Ի ՓՈԼԻՔՍ 1869ԻՆ Ի ՎԵՐ

ԱՆԳԼ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագլուխ եւ պահեստի դրամ

• Սնգլ. ոսկի 4,218,000

Ֆինիքս առկ հրդեհի դէմ Ապահովագրական Ընկերութիւն մըն է, ծանօթ էր պատուաւորութեամբ եւ վնասուց մէջ էր անմիջական վճարումներով:

Ֆինիքս կ'ապահովագրէ հրդեհի եւ կայծակի դէմ մէն տեսակ տնայրժ եւ շարժուն առարկանք, յոյժ նպատակաւ պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՈՒՄՆ ՎՆԱՍՈՒՑ. Յորդ վճարած է առաւել քան 27,000,000 տեղւոր հիւ:

Ընդհ. գործակալ Պոլսոյ եւ գաւառաց: Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վերայիս խան, Պանգ Օքոսանի փոյ Ղալաքիս:

Փոխ գործակալք Պոլիս

ՌՈՒԲ. ԱՅԻԿԵԱՆ ԺԻՎԱՆ ԹԷՔԷՆԱՆ

Էմիւն պէյ խան Ֆնսկիան խան

Ջանիշ բերդերու

Ա. ԷՆՔԱՆԻՐՃԵԱՆ

8—10